ՀՅԴ Պատասխանատու



ԴՐՕՇԱԿ

minimum WAGE

Հունվար N01 (1628)

2011

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պատմութիւն

«Դրօշակ»
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**

Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի

Ձեւավորումը՝ **Ա. Գրիգորյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Միհր Մկրտչյան 12/1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

"Droshak" monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

Խմբագրական

Սոցիալական բողոք, շարժում եւ համակարգային փոփոխութիւններ 2

ԼՂՀ հիմնախնդիր

ՀՀ դաշնակցությունը Արցախում (1989-1992թթ.) 4

Տեսակետ

Շրջափակվող Հայաստանը և ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարության պատասխանատվությունը 13

ՀՀ բանակ

Ռազմաօդային ուժերի և հակաօդային պաշտպանության զորքերի միավորման մասին 16

ՀՀ Ազգային Ժողով

Նվազագույն աշխատավարձի սոցիալ-իրավական հիմնախնդիրները և դրանց լուծման օրենսդրական հնարավորությունը Հայաստանում 24

Տարածաշրջան

Ազգային շարժման վերելքը Վրաստանում (1987-90 թթ.) 29

Սումգայիթ - 1988

Սումկայիթի հայոց ցեղասպանութիւն 36

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Պարսկաստան 44

Նոր գրքեր 45

Պատկերասրահ

Ամալյա Վարդանյան 48

Digitized by ARF PR Office

Սոցիալական բողոք, շարժում եւ համակարգային փոփոխութիւններ

2011 թուականն սկըսուեց քաղաքական եւ սոցիալական բուռն բողոքներով: Թունիսի քաղաքական յեղափոխութեան եւ Ալժիրում, Մարոկկոյում տեղի ունեցած նմանօրինակ՝ իրադարձութիւններին յաջորդեց Եգիպտոսի հասարակութեան բուռն ընդվզումը, որը եւս պարունակում է ոչ միայն քաղաքական սրընթաց փոփոխութիւնների վիթխարի ձրգտման, այլ նաեւ սոցիալական լիարժէք յեղափոխութեան բնորոշ տարրեր:

Հայաստանեան քաղաքական բեմահարթակում էլ 2011 թուականն սկսուեց սոցիալական բողոքներով. «փողոցային» առեւտրականների ցոյցերից յետոյ, անմիջապէս, բողոքի ակցիաներ անկացրեցին՝ Երեւանի տօնավաճառների առեւտրականները՝ մաքսատուրքերի բարձրացման դէմ, կանանց նկատմամբ բռնութիւնների դէմ պայքարող հասարակական կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ խաղաղ պայմաններում զոհուած զին-ուորների մայրերը: Սոցիալական սոյն բողոքները, թէեւ բխում են սահմանափակ թուով շերտերի շահերից, այդուհանդերձ դրանց գրեթէ համաժամանակեայ դրսեւորումները խօսում են հայաստանեան հասարակութեան սոցիալական խորը դժգոհութեան մասին, ինչն առայժմ արտայայտւում է ոչ միասնաբար:

Մարդու հասարակական կեանքի պատմութիւնը ցոյց է տալիս, որ սոցիալական տարանջատ բողոքների հանրագումարը, սոցիալական գաղափարախօսութեան առկայութեամբ եւ տարածմամբ, ի վիճակի է վերածուել սոցիալական մեծ շարժման:

Յատկապէս ժամանակակից հասարակական կեանքի պրակտիկան ցոյց է տալիս, որ սոցիալական բողոքի ալիքների վրայ բարձրանում են մի քանի հանրածանօթ գաղափարախօսական հոսանքներ.

- Պահպանողական հոսանքները, առհասարակ, սոցիալական բողոքը դարձնում են քաղաքական իշխանութեան հա-

կակշռման հարուածային մեխանիզմ, որի միջոցով, ժամանակ առ ժամանակ, որոշակի փոփոխութիւններ են պարտադրում պետութեան ներքին կամ արտաքին քաղաքականութեան մէջ:

- Նոր ազատական հոսանքները սոցիալական բողոքը յանգեցնում են քաղաքական համակարգի կադրային փոփոխութիւնների, եւ յաճախ, «գունաւոր յեղափոխութեան»՝ արդիական շաբլոններով, նախաձեռնում են դրսից առաւել կառավարելի եւ վերահսկելի իշխանութիւնների ձեւաւորմանը:

- Ընկերվար-ժողովրդավարական հոսանքները, ի տարբերութիւն վերոնշեալ երկու տեսակների, հիմնականում, ձգտում են համակարգային փոփոխութեան: Նրանք, արդարութեան գաղափար հաղորդելով սոցիալական բողոքին, զերծ են մնում տարերայնութիւններից, մեքենայութիւններից եւ արկածախնդրութիւններից: Երբ դեմոկրատական սոցիալիզմն է դառնում գերակայ գաղափարախօսութիւն եւ մղիչ ուժ, ապա շարժումը, սիստեմատիկ կերպով, ձգտում է համակարգային բարեփոխումների. սոցիալական բողոքը վերածւում է ոչ թէ սոցիալական բունտի (խռովութեան), այլ՝ գիտակցուած սոցիալական շարժման:

Սոցիալական բողոքը Հայաստանում ի յայտ է եկել անկախութիւնից ի վեր: Սակայն կարելի է ասել, որ դրա տիրական գաղափարախօսութիւնը կամ պահպանողականութիւնն է եղել, կամ նոր ազատականութիւնը: Դեմոկրատական սոցիալիզմը դեռ չի հասցրել դառնալ Հայաստանի սոցիալ-քաղաքական ոլորտի գերակայ գաղափարախօսութիւնը: Թերեւս տուեալ իրողութեան բազմաբնոյթ պատճառներից մէկը՝ խորհրդային ամբողջատիրական համակարգի առարկայական փորձն ու թողած ենթակայական հետքերն են: Այսօր այս հետքերը թօթափելու դժուարին հրամայականի դէմ յանդիման են կանգնած հայկական սոցիալ-դեմոկրատական հոսանքները:

Գաղափարա-քաղաքական ճակատի վրայ, հայկական սոցիալ-դեմոկրատական հոսանքները պէտք է մի կողմից պայքարեն պահպանողական եւ նոր-ազատական գաղափարախօսութիւնների վնասակար ազդեցութիւնների դէմ, իսկ միւս կողմից, կազմակերպականօրէն, ստանձնեն սոցիալական շարժման հեգեմոնի ամբողջական պատասխանատուութիւնը: Մի կողմից պէտք է ձգտեն համակարգային փոփոխութիւնների, պայքարելով յանուն արդարութեան եւ անապահով շերտերի սոցիալական շահերի պաշտպանութեան, իսկ միւս կողմից՝ պէտք է պահպանեն պետութեան ներքին կայունութեան եւ ազգային անվտանգութեան սկզբունքները:

Այսպիսով, հայկական սոցիալ-դեմոկրատական ճակատի համար սպասւում է համախմբման դժուարին գործ՝ Հայաստանում սոցիալական շարժումը առաջնորդելու համար եւ, միաժամանակ, պահանջւում է համապատասխան լրջութիւն, գաղափարական սկզբունքայնութիւն եւ պատասխանատուութեան գիտակցում:

Սա նշանակում է օր առաջ կազմել գաղափարա-քաղաքական ճակատ եւ մշակել սոցիալական համալիր քաղաքականութիւն եւ գործունէութեան ծրագիր:

Համոզուած ենք, որ Հայաստանի եւ բովանդակ հայութեան շահերից է բխում իրականացնել այս գործը՝ գաղափարապէս եւ կազմակերպականօրէն տէր կանգնել մեր քաղաքացիների սոցիալական բողոքին եւ շարժումը առաջնորդել դէպի համակարգային, արմատական փոփոխութիւններ:

ՀՀ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ (1989–1992 թթ.)

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Հ. Բ.
Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր

1988 թ. փետրվարի 20-ին, երբ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզային խորհրդի 20-րդ գումարման 4-րդ արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց մարզը դուրս բերել Խորհրդային Ադրբեջանի կազմից և վերամիավորել Խորհրդային Հայաստանի հետ, Արցախ-Ղարաբաղի ազգային ազատագրական պայքարը թևակոխեց պատմական նոր շրջան: Այնուհետև Արցախի հիմնախնդիրը դարձավ աշխարհասփյուռ հայության կենսական խնդիր: Մամուլից մինչև հեռուստացույց, մինչև լրատվության մյուս միջոցները, շեփորում էին Արցախի հարցը և, նույնիսկ, հետագայում Խորհրդային Միության փլուզումը կապում Արցախյան շարժման հետ: Չկար որևէ հասարակական-քաղաքական ուժ, որը չարձագանքեր ու չաջակցեր արցախյան պայքարին՝ սկսած նյութական և բարոյական օգնությունից մինչև մարտադաշտում թշնամու դեմ հերոսաբար մարտնչելը: Արցախյան շարժումը միավորեց տարբեր հայացքների ու համոզմունքների տեր հազարավոր մարդկանց, որոնց համար Մայր Հայաստանի հետ Արցախի միավորման գաղափարը դարձել էր ժամանակի հրամայականը: Արցախյան հերոսամարտի պատմությունը մեկ անգամ ևս ցույց տվեց, որ ճակատագրական պահերին, հիրավի, վճռական նշանակություն ունի ժողովրդի միասնությունը և վեհ հայրենասիրությունը: Անկասկած՝ Արցախյան շարժումն ուղղված չէր Խորհրդային Միության դեմ, նա հետապնդում էր փշրել թուրք-ազերիական գաղութային շղթան և հավերժ լինել մայր ժողովրդի հետ: Ահա թե ինչու ոչ միայն աշխարհասփյուռ հայությունը, ոչ միայն հասարակական-քաղաքական բոլոր ուժերը, այլև աշխարհի առաջադեմ մարդկությունը կանգնած են Արցախի ազատագրական պայքարի թիկունքում:

Արցախյան շարժմանը սաստար կանգնել՝ նշանակում է ամուր կառչել ազգային արմատներին և մեր ժամանակի աշխարհաքաղաքական իրադարձություններին: Աշխարհասփյուռ հայությունը խորապես գիտակցում է, որ Արցախը միայն հիմնահարց չէ, այլ նաև ճակատագիր ու գոյության խնդիր, հետևապես անհրաժեշտ է հաղթական ավարտին հասցնել հայության այդ գոյապայքարը:

Հայ հասարակական-քաղաքական ուժերի շարքում Հայ հեղափոխական դաշնակցությունը յուրահա-

տուկ կեցվածք ունի Արցախի հիմնախնդրի վերաբերյալ: Երկար տարիներ հայրենիքից հեռացած Դաշնակցությունը, որը հոգեպես և բարոյապես միշտ եղել է մայր ժողովրդի հետ, կիսել նրա ուրախությունն ու տխրությունը, արցախյան պայքարի հենց սկզբից հնչեցրեց իր ձայնը և պահը համարեց առանց ուշացնելու հայրենիք վերադառնալ ու սասար կանգնել ազգային պայքարին: Պայքարի հենց առաջին օրերից մեծ աշխատանք ծավալելով Սփյուռքում և համագործակցելով այստեղ գործող մյուս հայ քաղաքական ուժերի հետ, նամակներով, հեռագրերով, բողոքներով հեղեղում էին Կրեմլն ու Հայկոմկուսը: Նույնիսկ 1988-ի սեպտեմբերին նրանք Երևանի ցուցարարներից պահանջեցին վերջ տալ գործադուլներին և հանրահավաքներին՝ համոզված լինելով, որ Արցախի հարցը պետք է լուծվի Կրեմլում: Սակայն այդ պահանջը չընդունվեց հայրենիքում:

Հայ հեղափոխական դաշնակցությունը լինելով հայ քաղաքական մտքի այն միակ քաղաքական հոսանքը, որն «ունէր եւ ազգային ռազմավարութեան ընդհանուր սկզբունքներ, եւ ազգային-քաղաքական ուղեգիծ, եւ մանաւանդ ազգային ազատագրական պայքարի հարուս կենսափորձ, որ զինք կը յատկանէր հայ իրականութեան մէջ գործող բոլոր միւս քա-

ղաքական ուժերէն»[1], կարողացավ արագորեն կողմնորոշվել և ճիշտ ռազմավարություն մշակել: 1988-ի օգոստոսի 24-ին Աթենքում հրավիրված ՀՀԴ 24-րդ ընդհանուր ժողովը հայտարարեց, թե տեր կկանգնի Արցախի պահանջատիրությանը: Այդ նշանակում էր, ինչպես ակնարկվեց, Դաշնակցության հայրենիք վերադառնալը պատմական խիստ անհրաժեշտություն էր: Ընդհանուր ժողովը որդեգրեց «Դեպի Երկիր» գաղափարական կեցվածքը: Այսպիսով՝ Դաշնակցությունը «Դեպի Երկիր» ուղղեց իր բոլոր ուժերը, միևնույն ժամանակ ուղիներ մշակեց «շարժումը հեռու պահել վտանգաւոր նախաձեռնութիւններէ, Հայաստանի և Արցախի տնտեսութեան հզօրացում, հայրենի արժանաւոր իշխանութեան ստեղծում, համահայկական զօրակցութիւն Արցախի Դատին»[2]:

ՀՀԴ 24-րդ ընդհանուր ժողովի ընդունած որոշումը գործողության մեջ դրվեց առանց ուշացնելու: Դաշ-

նակցությունը վերադառնալով իր պատմական առաքելությանը՝ ընկալեց, որ պահանջատիրությունը ամբողջ հայության պահանջն է, նրա պատմական տարածքի միավորման անհրաժեշտությունը: Դա նաև նշանակում է, որ հայության պահանջատիրությանը պետք է տեր կանգնի հայ ժողովրդի պետական ղեկավարությունը, իսկ նա այն ուժն է, որը կարող է միավորել աշխարհասփյուռ հայությանը իր պատմական առաքելությունը կատարելու համար: Արցախյան շարժումը հենց այն հիմքը հանդիսացավ, որի շուրջ համախմբվեցին հայ պետականությունից սկսած մինչև բոլոր հասարակական- քաղաքական ուժերը, ամբողջ սփյուռքահայությունը:

1988-ի փետրվարյան օրերին հենց Թատերական հրապարակում սկսել էին կազմակերպվել կամավո-

1. «Ազդակ», Բացառիկ, 20 փետրուար 1998, էջ 10:
2. Նույն տեղում:



ական ջոկատներ Հայաստանի սահմանները և Արցախը պաշտպանելու համար: Կամավորական ջոկատներ կազմակերպվեցին ամբողջ Հայաստանում և Արցախում: Մեր հաշվումներով, իսկ սա առաջին անգամն է հրապարակվում, 1988–1992 թվականներին կազմակերպվել է 565 կամավորական ջոկաս, չհաշված Հայկական բանակը: Այդ կամավորական ջոկատներում ընդգրկվել են 30-40 հազար մարդ, իսկ Հայկական բանակում գրանցվածների թիվը հասել էր 70 հազարի: Ազատագրական պայքարի տարիներին Հայաստանից Արցախ են մեկնել, մոտավոր հաշվումներով, Գեղաշենի ենթաշրջան՝ 19 ջոկաս, Շահումյանի շրջան՝ 38, Մարտակերտ- Քարվաճառ՝ 95, Ասկերան-Աղդամ՝ 43, Շուշին ազատագրելու համար՝ 38, Մարտունու շրջան՝ 19, Քաշաթաղի շրջան և միջանցքը պաշտպանելու համար՝ 74, Հադրութ-Ֆիզուլի-Ջեբրայիլ-Ղուբաթլու-Զանգիլան-Հորադիզ՝ 73, բոլորը միասին՝ 399: Բոլոր կամավորական ջոկատներից մոտ 160-ը կազմակերպվել է Արցախում, 50-ը՝ Երևանում: ԼՂՀ Պաշտպանության նախարարության ռազմահայրենասիրական և հասարակական կազմակերպությունների հետ կապի բաժնից ստացված տեղեկագրի համաձայն միայն 1992 թ. գարնանից մինչև նույն թվականի սեպտեմբերի 1-ը ԼՂՀ տարածքում գտնվել են 196 առանձին վաշտեր, դասակներ, խմբեր և ծառայություններ[3]:

Որ այդ բոլոր կամավորական ջոկատներում կարևոր տեղ ունեին դաշնակցական ընկերները, դա անկասկած է և միանշանակ: Դաշնակցության 24-րդ ընդհանուր ժողովից հետո հայրենիք վերադարձան կուսակցության ակտիվիստներ, որոնք կապի մեջ գտնվելով վերոնշյալ կամավորական ջոկատների հետ, իրենք ևս կազմակերպում էին համանման ջոկատներ: 1988-ի վերջից և 1989-ի սկզբից Արցախում էին դաշնակցական մի խումբ գործիչներ, որոնց ակտիվ մասնակցությամբ կազմակերպվում էին կամավորական նորանոր ջոկատներ և ընդլայնվում կուսակցության շարքերը: Հայդուկային այդ ջոկատները ծնվում էին անաղմուկ, կազմակերպվում էր նրանց ռազմական

ուսուցումը և 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի Արևմտյան Հայաստանի հայդուկային պայքարի փորձը: Հադրութից մինչև Գեղաշեն, մինչև Շահումյան հարյուրավոր երիտասարդներ, նույնիսկ տարիքավորներ մտնում էին Դաշնակցության շարքերը և հավատարմության երդում տալիս: Այդ ժամանակաշրջանում Հայ հեղափոխական դաշնակցության կուսակցական կյանքի կարևոր մաս էր կազմում զենքի հայթայթումն ու փոխադրումը Արցախ: Եվ, իրոք, կարճ ժամանակամիջոցում Դաշնակցությունը կարողա-

3. Վերոնշյալ տվյալները տե՛ս հեղինակի անձնական արխիվ:

ցավ բառիս բուն իմաստով նվաճել արցախահայությանը: Վերջինս Դաշնակցության կարիքը շատ ուներ: Հետագայում, 1997 թ. հոկտեմբերի 25-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Արկադի Ղուկասյանը ադրբեջանական «Եդդի գյուն» («Յոթ օր») թերթին տված հարցազրույցում ասել է. «Դաշնակցությունը Ղարաբաղ եկած առաջին կուսակցությունն էր: Մենք զենքի կարիք ունեինք, և նրանք զենք բերեցին: Երբ 1992 թվականին կազմվեց Պետական պաշտպանության կոմիտեն, մենք անմիջապես նկատեցինք, որ մեր զինակից եղբայրներից շատերը դաշնակներ են... Մենք հրավիրեցինք Դաշնակցության ղեկավարության ժողով և հանձնարարեցինք սառեցնել կուսակցության անդամակցությունը... Թե՛ Դաշնակցությունը և թե՛ ՀՀՇ-ն առանց դժվարության ընդունեցին դա... Այժմ մեզ մոտ կա երկու գրանցված կուսակցություն. Դաշնակցություն և Համայնավարական կուսակցություն»[4]:

1989 թ. հուլիսին ՀՀԴ Բյուրոն բացեիբաց հայտարարեց, թե Դաշնակցությունը Արցախում է և «հայ ժողովրդի յեղափոխական կամքը եւ ոգորումները մարմնացնելու պատմական իր պատասխանատուության վրայ» և որ՝ «Հնչած է ժամը արցախեան շարժման հասունացման... Հնչած է ժամը համազգային միակամ պահանջատիրության, ոչ մէկ խուսափում արտօնելի է պատմական *մոմենթի* այդ պատասխանատուութենէն»[5]:

Արցախյան պայքարը դժվար էր, ծանր ու համառ: Դաշնակցության 24-րդ ընդհանուր ժողովից երկու տարի անց, երբ արդեն մեկ ու կես տարի էր, ինչ կուսակցությունը գործում էր Հայաստանում և Արցախում, 1990 թ. օգոստոսի 8-ին ընդունած հայտարարության մեջ ասված է. «Մեր պայքարը երկրաշունչ է եւ դժուարին: Պիտի տոկալ, պիտի պայքարել եւ հանգրուանային նուաճումներով հասնել մեր ազգային տեսլականի իրագործման: Յանձնառութեան եւ նուիրումի այս ճանապարհին, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը գիտակցօրէն ստանձնում է իրեն վիճակուած առաքելութիւնը: Ու մենք ճամբայ կելլենք գիտակցօրէն, վճռականութեամբ եւ ինչպէս վայել է Հ.Յ. Դաշնակցութեան՝ ամբողջական նուիրումի առաջադրանքներով»[6]: Երկու տարի անց, 1992-ի հունիսին, հայրենիքում հրավիրված, այնուհետև Ֆրանսիայում շարունակված 25-րդ ընդհանուր ժողովը մի անգամ ևս հաստատեց 24-րդ ընդհանուր ժողովի ընդունած պատմական որոշման միանգամայն ճիշտ լինելը: Իսկ մինչ այդ, 1990 թ. սեպտեմբերի 5-ին ՀՀԴ Հայաստանի պատասխանատու մարմինը դիմելով հայ ժողովրդին ընդգծել է, որ Արցախին սպասում է մահացու վտանգ: Նա գտնում էր, որ պետք է հնարավոր բոլոր միջոցներով նվաճել արցախահայությանը: Վերջինս Դաշնակցության կարիքը շատ ուներ: Հետագայում, 1997 թ. հոկտեմբերի 25-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ Արկադի Ղուկասյանը ադրբեջանական «Եդդի գյուն» («Յոթ օր») թերթին տված հարցազրույցում ասել է. «Դաշնակցությունը Ղարաբաղ եկած առաջին կուսակցությունն էր: Մենք զենքի կարիք ունեինք, և նրանք զենք բերեցին: Երբ 1992 թվականին կազմվեց Պետական պաշտպանության կոմիտեն, մենք անմիջապես նկատեցինք, որ մեր զինակից եղբայրներից շատերը դաշնակներ են... Մենք հրավիրեցինք Դաշնակցության ղեկավարության ժողով և հանձնարարեցինք սառեցնել կուսակցության անդամակցությունը... Թե՛ Դաշնակցությունը և թե՛ ՀՀՇ-ն առանց դժվարության ընդունեցին դա... Այժմ մեզ մոտ կա երկու գրանցված կուսակցություն. Դաշնակցություն և Համայնավարական կուսակցություն»[4]:

1989 թ. հուլիսին ՀՀԴ Բյուրոն բացեիբաց հայտարարեց, թե Դաշնակցությունը Արցախում է և «հայ ժողովրդի յեղափոխական կամքը եւ ոգորումները մարմնացնելու պատմական իր պատասխանատուության վրայ» և որ՝ «Հնչած է ժամը արցախեան շարժման հասունացման... Հնչած է ժամը համազգային միակամ պահանջատիրության, ոչ մէկ խուսափում

4. «Հայաստանի Հանրապետություն», N 208, 28.10.1997:
5. «Ազդակ», Բացառիկ, 20 փետրուար 1998, էջ 11:
6. Նույն տեղում:

լոր միջոցներով նպաստել Արցախի ինքնապաշտպանությանը, բարձրացնել արցախահայության դիմադրական կորովը, ինչպես նաև նպաստել մարզի տնտեսական հզորացման ծրագրին: Ինչպես ՀՀԴ-ն, այնպես էլ արտասահմանում գործող մյուս քաղաքական ուժերը չէին դադարում բողոքներ ներկայացնել խորհրդային իշխանություններին և պահանջել արդարացիորեն լուծել արցախահայության հիմնախնդիրը: ՀՀԴ Բյուրոն, ՍԴՀԿ Կենտրոնական վարչությունը և ՌԱԿ Կենտրոնական վարչությունը 1990 թ. հունվարի 25-ին, Բաքվի ահեղ սպանդից հետո, Խորհրդային Միության Գերագույն խորհրդի նախագահությանն ուղարկած համատեղ հեռագրում նշում էին, որ «Երկու տարի է, ինչ արցախահայությունը ծանր օրեր է ապրում: Արցախը, որ մնում է Ադրբեջանի կազմում, Ստալինի մեղքով է: Սումգայիթից մինչև Կիրովաբադ հայերի սպանդ է կազմակերպված: Խորհրդային Միության անտարբերությունը զարմանք և վրդովմունք է առաջ բերում: Հայ ժողովուրդը ոչ մի ատելություն չունի Ադրբեջանի ժողովրդի նկատմամբ: Հայ ազգային երեք կուսակցությունները մտահոգված են Լեռնային Ղարաբաղի ու այն Հայաստանին միացնելու հարցով»[7]: Իսկ նույն թվականի դեկտեմբերին ՀՀԴ Ա շրջանային ժողովը հաստատեց «Խոսք հայ ժողովրդին» հայտարարությունը, որով հավաստում էր, որ «աւելի քան պատրաստ է մինչեւ վերջին շունչ քալելու նուիրման իր ճանապարհէն»[8]:

Սփյուռքից և Հայաստանից նորանոր մարտիկներ ներգրավվելով Դաշնակցության շարքերը, մեկնում էին Արցախ և Հայաստանի սահմանները՝ թշնամու դեմ մարտնչելու ու հայրենի հողը պաշտպանելու համար: Ակնհայտ է, որ 1990 թ. երկրորդ կեսից սկսած ավելի էր ծանրացել արցախահայության վիճակը: Խորհրդային զինված ուժերի աջակցությամբ թուրքազերիները ճնշման տակ էին վերցրել Ստեփանակերտը, Հադրութը, Մարտունին, Ասկերանը և այլ բնակավայրեր: Արցախի նկատմամբ քաղաքական և ռազմական ճնշումը նրան կանգնեցրել էր Ադրբեջանին վերանթարկվելու վտանգի առաջ: Սակայն արցախցիները խիզախաբար մերժեցին այդ բոլոր սպառնալիքներն ու սադրանքները: 1991 թ. առաջին կեսին Լեռնային Ղարաբաղը, Գեղարքունին ու Շահումյանը դեռևս օդային կապ ունեին Հայաստանի հետ: Հենց այդ ժամանակ, 1991 թ. մայիսի 1-ին, ՀՀԴ Բյուրոն և ՀՀԴ Հայաստանի ԿԿ-ն հայտարարությամբ հանդես գալով, ի լուր բոլորին հայտարարեց, որ կուսակցությունը կազմակերպչական իր բոլոր կարողությունները դնում է Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի ենթակայության տակ՝ Արցախ-Շահումյանի հայության պաշտպանությունը պետականորեն ապահովելու պահանջով[9]: Սա մեծագույն հայրենասիրություն էր, ժողովրդին նվիրվածության փառավոր օրինակ, որը չգնահատվեց լևոնականների

7. «Դրոշակ», 1990, N 21, էջ 2-3:
8. «Ազդակ», Բացառիկ, 20 փետրուար 1998, էջ 12:
9. Հրանտ Աբրահամյան, Մարտնչող Արցախը, գիրք Գ, Երևան, 2007, էջ 564:

կողմից:

ՀՀԴ գործիչ Վահան Հովհաննիսյանի վկայությամբ, արդեն 1990 թվականին Դաշնակցության առաջին զինված ջոկատները, հայ հայրենասերների կամավորական մարտական մյուս ջոկատների հետ միասին, սկսեցին Ղարաբաղի ինքնապաշտպանության կազմակերպումը: Այդ գործի համակարգողն ու ղեկավարը Հրանտ Մարգարյանն էր: Նրա ստեղծած ռազմական խորհուրդը մեծ դեր խաղաց Ղարաբաղ մեծ քանակությամբ զենք հասցնելու և մարտական ջոկատներ պատրաստելու գործում: Այդ ժամանակ էլ սկսվեց ազգային-ազատագրական պայքարի ծանր փուլը և Ղարաբաղի բանակի ձևավորման շրջանը: Ինչպես վկայում է Վահան Հովհաննիսյանը, ռազմի գործի իսկական գիտակներ քիչ կային, հազիվ մի երկու հոգի: Արցախի պաշտպանությանը նվիրվածներից շատերը հայրենասիրական պոռթկումից զատ, ընդհանրապես ոչինչ չունեին[10]:

Հրանտ Մարգարյանը, Վահան Հովհաննիսյանը և էլի ուրիշներ Արցախում էին, Գետաշենում, Բերդաձորում, Շահումյանում, պայքարի ամենավտանգավոր

տեղերում: Նրանք իրենց նվիրվածությամբ փայլուն օրինակ էին հանդիսանում: Անկարելի է խոսել Արցախյան պայքարի մասին, առանց փառաբանելու այդ պայքարում նահատակված Թաքուլ Կրպեյանի, Սիմոն Աչիգկյոզյանի, Վարդան Բախչյանի, Կարոյի, Արթուր Մկրտչյանի, Դուշմանի (Վարդան Ստեփանյան), Մերուժան Մոսիյանի, Բեկորի (Աշոտ Ղուլյան), Արթուր Ղարիբյանի, Պետոյի (Պետո Ղևոնդյան), Վիգեն Գրիգորյանի, Շահեն Մեղրյանի, Նորիկ Դանիելյանի և դաշնակցական մյուս զոհված ընկերների ու բոլոր մարտիկների անունները:

* * *

Դաժան, շա՜տ դաժան, բայց հերոսական ու դյուցազնական պատերազմի բովով է անցել Արցախի ազատագրական պայքարը: Այդ պայքարի հյուսիսային կողմը ծածկում էր Գետաշեն-Մարտունաշենը և Շահումյանը: Դեռևս 1990 թ. գարնանը բարդացել էր այդ կողմի վիճակը: Գետաշեն-Շահումյանը միացնող ճանապարհի վրա են գտնվում Ազատ, Կամո և Ղուշչի-Արմավիր գյուղերը, որոնց բնակչությանն արտաքսելու հարցը թուրք-ազերիական կողմի համար դարձել էր օրերի խնդիր: Այդ գյուղերի հայ բնակչությունը տեղահանվեց այստեղ խորհրդային բանակի և ներքին զորքերի ստորաբաժանումների տեղավորվելուց

10. «Ազդակ», Բացառիկ, 20 փետրուար 1998, էջ 51:

հեսո: Միանգամայն հսկայական էր, որ հայ բնակչության տեղահանման գործողությունները խրախուսվում կամ նույնիսկ ղեկավարվում էին կենտրոնական իշխանությունների կողմից: Հայաստանի Գերագույն խորհուրդը 1990-ի մարտի 9-ին դիմում հղելով ԽՍՀՄ ԳԽ նախագահությանը, տագնապ հայտնեց Հյուսիսային Արցախում ստեղծված այդ ծանր վիճակի առթիվ: Որպես հրատապ հարց՝ պահանջվեց Ազատ, Կամո, Ղուշչի-Արմավիր և Գետաշենի ենթաշրջանի մյուս գյուղերը հանձնել Շահումյանի շրջանին: «Հակառակ դեպքում,– ասված է այդ փաստաթղթում,– անկանխատեսելի հետևանքների ողջ պատասխանատվությունն ընկնում է երկրի կենտրոնական իշխանությունների վրա»[11]:

Այնուամենայնիվ երկրի կենտրոնական իշխանությունները շարունակում էին բացահայտ և լկտի գործել հայության նկատմամբ: 1990-ի գարնանը Կամո, Ազատ և Ղուշչի-Արմավիրը հայաթափվելուց հետո Գետաշենի ենթաշրջանը մնաց Շահումյան-Լեռնային Ղարաբաղից կտրված ու շրջափակված: Գետաշենի և նրա ենթաշրջանի պաշտպանության հարցը դարձավ ամենահրատապը: Երևանի Թատերական հրապարակից կոչեր էին հնչում պաշտպանել Գետաշենը: 1989 թվականից մինչև 1991-ի ապրիլի վերջը Գետաշենի ենթաշրջան մեկնեցին «Արաբո», «Ալաշկերտ», «Գարեգին Նժդեհ», «Դավիթ Բեկ», «Զորավար Անդրանիկ», «Մալաթիա», «Սուրմալու», «Սասուն», «Մուսալեռ», «Մեծն Տիգրան» և այլ կամավորական ջոկատներ: Այդ ժամանակ Արցախ-Հայաստան, Գետաշեն-Շահումյան-Հայաստան կապը իրագործվում էր միայն ուղղաթիռներով: Եվ չնայած դրան, ինչպես հետո բանտում գրած իր հուշերում նշել է Վահան Հովհաննիսյանը, «մարտական եւ բարոյական պատրաստուածութիւն անցան Հայաստանի եւ Ղարաբաղի հիմնական կամաւորական կազմաւորումները, որոնք լիցք հաղորդեցին կանոնաւոր զինուած ուժերի ստեղծման գործին»[12]:

Սփյուռքից եկած կամավորները շատ ավելին գիտեին, քան տեղի կամավորները: Սակայն նրանք էլ անտառներում ու բաց տարածություններում կռվելու փորձ չունեին. պետք է սովորեին, սովորեին լեռների լանջերին թառած գյուղերը պաշտպանելիս: Նրանք պետք է տեղացիներին փոխանցեին փողոցներում և մարդաշատ վայրերում կռվելու իրենց փորձը: Այդ տեսակետից առանձնապես ծանր էր Գետաշենի և Մարտունաշենի վիճակը: Այս գյուղերը չորս կողմերից սեղմվել էին և գտնվում էին հակառակորդի օղակի մեջ: «Արաբո» ջոկատը 1990-ի կեսերին հասնելով Շահումյան և Գետաշեն, այստեղ հսկողություն սահմանեց: Եվ սկսվեց Գետաշենի 8-ամսյա անօրինակ պաշտպանությունը, ինչը կարևոր դեր է խաղացել Ղարաբաղի ազգային-ազատագրական պայքարի զինված փուլի բարոյական կայացման գործում:

11. «Սովետական Հայաստան», 11.03.1990:
12. «Ազդակ», Բացառիկ, 20 փետրուար 1998, էջ 50:



Հենց սկզբից Թաքուլ Կրոեյանի և «Արաբոյի» ղեկավար Մանվել Եղիազարյանի առաջադրանքը հըստակ էր և պարզ՝ Գեսաշենն ու Մարտունաշենը պաշտպանել թուրք-ազերիների վայրագություններից ու խորհրդային ուժերից: Հնարավորին չափ տեղացիներին պետք է ներգրավեին պաշտպանության գործում: Գեսաշենի և Մարտունաշենի հերոսական մարտերում անօրինակելի սխրագործություններ էին գործում այստեղ գտնվող ազատամարտիկները: Հակառակորդի «Օղակ» գործողությունը մտել էր ընթացքի մեջ. «Արաբո», «Ալաշկերտ» և Դաշնակցության մարտիկները նստելով սեղանի շուրջ, որոշեցին մինչ այդ իրագործված պաշտպանական գործողություններից անցնել հարձակողական գործողությունների: Այստեղ թե՛ Դաշնակցությունը և թե՛ մյուս կամավորական ջոկատները գործում էին համատեղ՝ իրար հետ կիսելով վերջին կտոր հացը և զինամթերքը: Համատեղ գործողություններով ոչնչացրին Խանլարի գրոհայինների լկտի և դաժան հրամանատար Գյուրզա Ալիին, նրա վարորդին ու թիկնապահին, մի ավազակ, որը սարսափ էր տարածում շրջապատում: Երկրորդ հարվածը

հասցրեցին «Արաբոյի» տղաները՝ պայթեցնելով թշնամու ավտոբուսը, ոչնչացնելով 11 ավազակի: Այսպես՝ մեկը մյուսի ետևից հակառակորդը հակահարված էր ստանում: «Օղակ» գործողությունը հայտնի դարձավ Գեսաշեն-Մարտունաշենի ահեղ մարտերի օրերին: 1991-ի ապրիլի վերջին և մայիսի սկզբի օրերը ամենադաժանն էին Գեսաշեն- Մարտունաշենի պատմության մեջ: Դաշնակցական ընկերները և «Արաբոն» կռվում էին ուս-ուսի տված: Հերոսաբար ընկան դաշնակցական ընկերներ 55-ամյա գիտնական, հայրենիքին անմնացորդ նվիրյալ Սիմոն Աչիկգյոզյանը, Թաքուլ Կրոեյանը, Արթուր Կարապետյանը, Վալերի Նազարբեկյանը, նրանց զինակից Զարգանդ Դանիելյանը և ուրիշներ: Իսկ մինչ այդ Հայ հեղափոխական դաշնակցության առաջին զոհերը եղել էին Եղցահողում՝ բերդաձորցի Ստեփանը, 1991-ի ապրիլի 4-ին Գեսաշենում՝ Մարտիրոս Շահ-

նազարյանը[13]:

Անհնարին եղավ պաշտպանել Գեսաշենն ու Մարտունաշենը: Այդ գյուղերի բնակչությունը բռնագաղթեց Հայաստան, իսկ կամավորական ուժերը և զենքն ու զինամթերքը անկորուստ տեղափոխվեց Շահումյան: 1991 թ. մայիսի 23-ին ՀՀԴ Հայաստանի Կենտրոնական կոմիտեն հանդես գալով հայտարարությամբ, նշեց, որ Հայաստանի սահմանամերձ շրջանները գտնվում են ծանր պայմաններում: Առաջարկվեց հանրապետության Գերագույն խորհրդին հայ իրակա-

13. «Ազդակ», Բացառիկ, 1992, էջ 55, 56, 58:

նության մեջ գործող բոլոր ուժերի մասնակցությամբ մշակել «քաղաքականութիւն մը, որ դադարեցնէ Արցախի շարունակուող տագնապը եւ լուծում մը գտնէ այս կարեւոր հարցին»[14]: Սակայն Դաշնակցության այդ առաջարկությունը թողնվեց անպատասխան:

Գեսաշեն-Մարտունաշենից կամավորական ուժերը դաշնակցական մարտիկների հետ հեռացան Շահումյան, որտեղ շրջանի պաշտպանության գլուխ էր կանգնած Դաշնակցության անդամ Շահեն Մեղրյանը՝ պատմական Գյուլիստանի նվիրյալ զավակը, որն իր մարտական ընկերներով 1993-ի ապրիլի 17-ին զոհվեց հերոսաբար և իր մշտական տեղը գտավ Եռաբլուրում: Դաշնակցության և ինքնապաշտպանության մյուս ուժերը հանգրվանելով Շահումյանի շրջանում, հակառակորդին առաջին հարվածը հասցրին մայիսի 24-ին Հայ Բորիս գյուղի պաշտպանության համար մղված մարտերում, որտեղ հերոսաբար ընկան դաշնակցական ընկերներ Աշոտ Խաչատրյանը, Մայիս Հովհաննիսյանը, Սարգիս Մաթևոսյանը, Ներսես Պետրոսյանը և նրանց մարտական ընկեր, ԱԻՄ-ական Աշոտ Մեյրոյանը:

Հակառակորդը նորանոր հարձակումներ գործելով և ուժեղացնելով ճնշումը, հուլիսի 20-ին կրկին շրջապատեց Էրեջ, Բուզլուխ և Մանաշիդ գյուղերը, որոնց բնակչությունը նախօրոք հեռացել էր: Այստեղ մղված մարտերում հերոսաբար զոհվեցին դաշնակցական ընկերներ Ջիվան Աբրահամյանը, Վարդան Տերտերյանը, Նիկոլայ Հայրապետյանը և Անդրանիկ Պետրոսյանը, վիրավորվեցին 16 հոգի[15]: Ջիվան Աբրահամյանը հետմահու արժանացել է Հայաստանի ազգային հերոսի կոչման: Հուլիսի 22-ին բուռն մարտեր տեղի ունեցան Վերիշենի պաշտպանության համար, որտեղ նահատակվեց Դաշնակցության անդամ Անդրանիկ Պետրոսյանը, իսկ օգոստոսի 28-ին Ղարաչինարի ինքնապաշտպանության մարտերում զոհվեց

նվիրյալ դաշնակցական Գարիկ Գրիգորյանը:

Շահումյանում իրադարձություններն այնպես էին դասավորվել, որ հուլիսի երրորդ տասնօրյակի սկզբին Բուզլուխը, Մանաշիդը և Էրեջը հանձնվել էին հակառակորդին, որոնց հաջորդել էին Բաշղլաղը, Թոդանը և Սարիսուն: Արդեն սեպտեմբերի 23-ի դրությամբ ազատագրվել էին Բուզլուխը, Էրեջը և Մանաշիդը: Այդ ավերված գյուղերը վերականգնելու համար Հայ հեղափոխական դաշնակցությունը և Հայ օգնության միությունը հիմնեցին մեկ մլն. ռուբլու հիմնադրամ և սկսեցին այդ գյուղերի վերականգնման աշխատանքները: Սակայն մարտերը շարունակվում էին: Հերոսաբար զոհվեցին դաշնակցական ընկերներ Սարգիս Սիսարյանը, Արշավիր Ասլանյանը, Աթաբեկ Վարդանյանը, Ռաֆիկ Խաչատրյանը, Սամվել Անտոնյանը, Արշավիր Սարգսյանը և ուրիշներ[16]:

(Շարունակելի)

14. Նույն տեղում, էջ 58:
15. «Ազատամարտ», N 21, հուլիս, 1991:
16. «Ազդակ», 1992, Բացառիկ, էջ 62, «Ազատամարտ», N 33, 17-23.10.1991:

Շրջափակվող Հայաստանը և ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարության պատասխանատվությունը

Լևոն Շիրինյան

Ակնհայտ է. թե՛ Հայաստանի, թե՛ Արցախի անվտանգության և թե՛ Ջավախքի ազգային տարածքի ապագայի տեսանկյունից էական նշանակություն ունի հայ-թուրքական հարաբերությունների շրջանակներում ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարության, հայ մտավորական ընտրանու կողմից երկրի ազգային շահերի գիտակցումն ու իմաստավորումը, այո՛, այնքան դառնալի պատմական փորձի հիման վրա:

Բնական է, ուրեմն, հարցադրման շրջանակներում կոնկրետ իրողությունների վերհուշը և նրանց ենթատեքստում՝ արդիականության արժևորումը: Այդ իմաստով կարևոր մի դրվագ՝ բեմականացված Բաքումի խորհրդաժողովում (1918 թ., մայիս-հունիս), թուրքական և հայկական պատվիրակությունների բանակցությունների օրերին: Հայաստանի ավագագույն քաղաքական գործիչներից Ալ. Խատիսյանը (պատվիրակության նախագահ -Լ.Շ.), կապված նորահռչակ հանրապետության սահմանագծման խնդրի հետ, գրում է.

«Թուրքերը կխուսափեին նկատի առնել մեր սահմանները Վրաստանի և Ադրբեջանի հետ, անոնք կգծեին մեր և Թուրքիո սահմանները՝ թողելով, որ մենք ինքներս հասկացողության գանք մեր հարևաններուն հետ, անոնց հետ ունեցած մեր սահմաններու մասին: Բայց մենք գիտեինք արդեն, որ վրացիները մեզմե կպահանջեին խոշոր հայկական հողամաս մը մինչև Ղարաքիլիսե (Վանաձոր - Լ.Շ), իսկ ադրբեջանցիները՝ մինչև Երևան: Անվիճելի հողեր էին միայն Նոր-Բայազիտի (Գավառ – Լ.Շ.) գավառը և Ալեքսանդրապոլի (Շիրակի մարզ - Լ.Շ.) լեռնային մասը, որոնց մեջ հազիվ կիյնար 13 կիլոմետր երկաթուղի» (Խատիսյան Ալ., Հայաստանի Հանրապետության

Ալեքսանդր Խատիսյան

ծագումն ու զարգացումը: Բ տպագր., Պեյրութ, 1968, էջ 86):

Նիստերի ընթացքում, շարունակում է մեր քաղաքական այրերից իմաստունն ու խոհունը, «Վեհիբ փաշայեն (պատվիրակության նախագահ - Լ.Շ.) և Խալիլ բեյեն (պատվիրակության անդամ -

Արամ Մանուկյան

Լ.Շ.) լսեցինք շատ մը բաներ, որ այսօր ալ, վաղն ալ առաջնակարգ նշանակություն պիտի ունենան հայ ժողովուրդի բախտի համար: Ցույց տալով քարտեզը և նկարագրելով թրքական ձգտումները, Վեհիբ փաշան ըսավ.

«Դուք կտեսնեք, որ ճակատագիրը կքաշե Թուրքիան արևմուտքեն արևելք. մենք հեռացանք Բալքաններեն, կհեռանանք նաև Ափրիկեեն, բայց մենք պետք է տարածվինք դեպի Արևելք. հոն է մեր արյունը, մեր կյանքը ու լեզուն: Եվ ասիկա տարերային ձգողություն ունի. մեր եղբայրները Բաքու, Դաղստան, Թուրքիստան և Ադրբեջան են: Մենք պետք է ճամբա ունենանք դեպի հոն: Եվ դուք՝ հայերդ կանգնած եք մեր այդ ճամբուն վրա: Պահանջելով *Վանը*՝ դուք կփակեք մեր ճամբան դեպի Պարսկաստան: Պահանջելով *Նախիջևանն* ու *Զանգեզուրը*, դուք արգելք կդառնաք մեզի իջնելու Քուռի հովիտը և երթալու Բաքու: *Կարսն* ու *Ախալքալաքը* կփակեն մեր ճամբան դեպի Ղազախ և Գանձակ: Դուք պետք է մեկ կողմ քաշվիք և մեզի ճամբա տաք: Ահա թե ո'ւր է մեր հիմնական վեճը: *Մեզի պետք են երկու լայն ճամբաներ, որոնք հնարավորություն տան մեր բանակներուն առաջ շարժելու և պաշտպանվելու: Մեկ ճամբան Կարս-Ախալքալաք-Բորչալու–Ղազախն է, որ կտանի դեպի Գանձակ, մյուսը կերթա Շարուր-Նախիջևան-Զանգեզուրով Քուռի հովիտը: Դուք կարող եք մնալ անոնց մեջտեղը, այսինքն Նոր-Բայազիտի և Էջմիածնի շուրջը* (որտեղ գլխովին ջախջախվել են, այնտեղ զիջում են - Լ.Շ.) (ընդգծումներն իմն են.-Լ.Շ.)» (նույն տեղում):

Թե ինչքան է հետևողական թուրք ռազմաքաղաքական ղեկավարությունը հայաստանյան ռազմավարության վեկտորում (բաղադրիչում), ցույց է տալիս վերոշարադրյալ տեքստի և հետխորհրդային տարիների թուրքական վարքագծի խորքային դրսևորումների համեմատությունը. այն, որ հրաժարվելով Կարս-Գյումրի (Ալեքսանդրապոլ) հաղորդակցության օպտիմալ ուղու տրանզիտից, հայ-թուրքական «մերձեցումը/հաշտեցումը» վերածելով քաղաքական- հոգեբանական ֆլիրտի, իրական ակտիվություն է դրսևորում «երկու լայն ճամբաներից» (Ալ. Խատիսյան) երկրորդում՝ արցախյան ճակատում. ռազմաքաղաքական ճնշումների միջոցով, երբեմն-երբեմն շրջանառության մեջ դնելով Նախիջևանի խնամակալության գործոնը, և «երկու լայն ճամբաներից» առաջինում՝ Կարս-Ախալքալաք ուղղությունում, առաջին հերթին հայկական ազգային տարածք Զավախքում, համախորհուրդ և համագործակցաբար վրաց թավադների դասի հետ (ինչպես 1920 թ. աշնանը)՝ արդիական ճանապարհաշինության և համապատասխան ենթակառուցվածքների ստեղծումով ճանապարհային խաչմերուկը վերածելով պոտենցիալ խցանի:

Այսրկովկասում և Հայաստանի շուրջ ռազմաքաղաքական քարտեզի վրա ձևավորվող «նոր» միտումները, անակոնդայի մեթոդներով տեղաշարժերը, այնքան են ակնառու, որ միայն քաղաքական դալտոնիզմով ու ընչաքաղց հավկուրությամբ տառապողները կարող են չտեսնել այն, ինչը անհանգստացնում էր Ալ. Խատիսյանին:

Թուրքիան Հայաստանի հարցում 1920 թվականից հետո էլ մնացել է նույնը և անփոփոխ: Մանրուքները չեն փոխում և չեն էլ կարող փոխել ընդհանուր ռազմավարության հարցադրումները:

Նշանակում է Հայաստանի ռազմաքաղաքական վերնախավը իրավունք չունի դրսևորելու մինչեղեռնյան շրջանի հայ ղեկավարության կրավորականությունը, հանձնվել «իրերի օբյեկտիվ ընթացքի» հորձանքին: Նա պարտավոր է առաջին հերթին լայն ու մասնագիտական քննարկումներ կազմակերպել՝ սահմանելով ՀՀ ազգային շահերի գամման Արցախի անվտանգության և Զավախքի ազգային տարածքում հնարավոր զարգացումների հաշվառումով:

Իսկ մինչ այդ անհրաժեշտ է, պատմական հեռանկարի ընդգրկումով, մշակել ու հռչակել իրավիճակին համահունչ ռազմավարություն, որը ենթադրում է պետության կազմակերպական ուժի և դերի աննախընթաց բարձրացում,

ինչը ոչ այլ ինչ է, քան շրջադարձ դեպի *պետական կապիտալիզմ* հանրապետության բովանդակ կյանքի *ապաօլիգարխացում* և *արդիականացման* (մոդեռնիզացիա) կուրսի որդեգրում:

Քաղաքական- ռազմավարական կտրուկ շրջադարձի շրջանակներում գերակա կդառնա (պե'տք է դառնա) ՀՀ (+ ԼՂՀ) վերածումը *գիտաարդյունաբերական* համալիրի իր բաղադրիչներով. *համալսարանական* արդիական կրթությամբ, *տեխնոլոգիական* (ինժեներական) հեղաշրջումներով և *ագրոարդյունաբերական* կոմպլեքսների դինամիկ փոխակերպումով:

Շրջադարձի տվյալ գործընթացը պետք է հաղթահարի Հայաստանի համար կենսական նշանակության երկու նշածող.

ա) Կրթական հեղաշրջումների, մասնավորապես համալսարանական կրթության զարգացումը պետք է գերազանցի թուրքական համալիրը,

բ) Վրաստանի հետ փոխհարաբերությունների առկա ընկալման մակարդակը. նրա հետ վախվորած և իներցիալ գործելաձևի փոխարինումը Realpolitik-ի հայեցակարգային ու հեռագնա հարցադրումներով՝ այն ըմբռնումով, որ ՀՀ քաղաքականության ճշգրտված վրաստանյան վեկտորն է, որ կուրվագծի ՀՀ ռազմավարական մանևրի ազատության չափը:

Հ.Գ. – Պատմական կոնկրետ հանգամանքների հարկադրանքով հայ ժողովուրդն աստիճանաբար, հատկապես XVII դարից սկսած, ապրեց գահավեժ անկում՝ որպես հետևանք Հայկական լեռնաշխարհի քրդական վայրի ցեղախմբերի և թյուրք քոչվոր ու ավարառու էթնոսի ներթափանցման:

Իսկ քաղաքակրթության արշալույսին Հռոմի, Կյուրոսի Պարսկաստանի, Բյուզանդիայի միջև հավասարակշռություն ստեղծող երբեմնի Հայաստանը վերածվեց մարդակեր հորդաների հետ գոյապայքարի խնդիրներ լուծող տարածքի, պետականակերտ ու մշակութաստեղծ գործունեությունը տեղափոխելով ազգային-ազատագրական կռվի հրապարակ:

Հայոց համար մրցակցության թիրախ դարձան, դրժբախտաբար, քաղաքակրթության նախադուռը շոշափող, իրենց ինքնության մեջ մինչև օրս դժվար կողմնորոշվող էթնոսներն ու ցեղախմբերը: Այսպիսով, երբեմնի «եվրոպաստեղծ» ժողովուրդը, նրա ազնվականությունը, արդյունաբերող ու մտավոր դասը աստիճանաբար կորցրին իրենց մշակութային- քաղաքակրթական նշածողը: 1915-ը Հայաստանը անսահմանորեն հեռացրեց Արևմուտքից՝ ֆիզիկական առումով ու հոգևոր ոգորումներով: Առաջացավ ասիականության փոշու մեջ թաղվելու իրական վտանգ. մերօրյա Հայաստանի, Հայկական հարցի շուրջ դրսևորվող միտումները ավելի են ընդգծում վտանգը:

Իրավիճակը հաղթահարելու պատասխանատվության առյուծի բաժինը, նշենք, հանրապետության *վերնախավինն* է, որն *ընտրահայ* դառնալու հասարակական պահանջն ունի: Որպես տիպարգործիչի օրինակ կարող է դիտվել անզուգական *Արամը* կամ, եթե գայթակղիչ է, Ուինստոն Լեոնարդ Սպենսեր *Չերչիլը*:

«Չերչիլի կյանքը,- գրում է փորձագետը,- մարմնացումն է քաղաքական և մարդասիրական անգլիական մեծ ավանդույթի, որտեղ պատիվը, խիղճը և հայրենիքի հանդեպ պարտքը գերակշռում են անձնական շահերին, ընտանեկան կամ այլ կորպորատիվ կլանների պատվամոլություններին» (Վ. Դերգաչև):

Այսքանը...

ՌԱԶՄԱՕԴԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՀԱԿԱՕԴԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՍԻԱՎՈՐՄԱՆ ՍԱՀՄԱՆ

Արծրուն Հովհաննիսյան



Նախաբան

Թռչող սարքերի (ԹՍ) ստեղծումից և ռազմական ոլորտում կիրառումից ի վեր ընթանում է մշտական պայքար ռազմաօդային ուժերի (ՌՕՈՒ) և հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) միջև: Սակայն այս հակառակորդ զորատեսակների շփման ոլորտում կա մի գիծ, որից այն կողմ սկսվում է նրանց համագործակցությունը: Որն է այդ նուրբ ու զգայուն սահմանը. այս ուղղությամբ մասնագետները տարբեր ժամանակներում ունեցել են ամենատարբեր կարծիքները: Մենք այս հոդվածում կփորձենք տվյալ հարցին մոտենալ մեր տարածաշրջանում անվտանգության ապահովման համատեքստից:

20-րդ դարի սկզբին ինքնաթիռները սկսեցին կիրառել ռազմական նպատակներով: Վերջիններս գրեթե անպատիժ մահ ու ավեր էին սփռում երկնքից, քանի որ գոյություն չունեին հակաինքնաթիռային միջոցներ:

Առաջին համաշխարհային պատերազմի (ԱՀՊ, 1914-1918 թթ.) տարիներին կարճ ժամանակում ստեղծվեց և մի շարք պետությունների զինված ուժերում (ԶՈՒ) հայտնվեց համապատասխան զենիթային հրետանի (ԶՀ): Որպես զենիթային միջոցներ՝ սկսեցին կիրառվել նաև գնդացիրները: Այնուամենայնիվ ԱՀՊ-ի ընթացքում կիրառված հակաինքնաթիռային միջոցներն ունեցան համեստ դերակատարություն[1]:

Հակամարտությունների պատմությունից

Հակաինքնաթիռային միջոցների զարգացման միտումը շարունակվեց նաև հետպատերազմյան տարիներին: Զենիթային սպառազինության զարգացումը հիմնված չէր միայն զենքերի ստեղծման վրա, քանի որ օդուժի կիրառումը զարգանում էր շատ արագ և դառնում բարդ, մանրակրկիտ ծրագրվող գործողություն: ՀՕՊ-ի կազմակերպման գործում կարևոր տեղ էին զբաղեցնում նաև հայտնաբերման, նախազգուշացման և ուղղորդման հարցերը: Վերջին բոլոր հարցերի լուծումները սկզբից կատարվում էին մարդու կողմից, իսկ հետագայում ի հայտ եկան ձայնորսիչներ, ՀՕՊ-ի դիտակետերը, աերոստատները, լուսարձակները և այլն: Ի վերջո առաջնությունը տրվեց «Լավագույն պաշտպանությունը հարձակումն է» սկզբունքին, և ստեղծվեց կործանիչ օդուժը: Պարադոքսն այն էր, որ բացառապես պաշտպանական ֆունկցիաներ ունեցող կործանիչները մարտում որպես հարձակվող կողմ էին հանդես գալիս:

Կործանիչները լայնորեն կիրառվում էին օդային գերազանցության համար և արդյունավետորեն պայքարում էին օդային ցանկացած նշանակետի դեմ: Գործընթացին ավելի կազմակերպված տեսք տալու համար հրամանատարներն սկսեցին կիրառել օբյեկտների բնագծային պաշտպանություն, որտեղ կործա-

1. А. Базаревский. Мировая война 1914-1918. Компания 1918 г. Во Франции и Бельгии, т. 2, М.-Л., 1927, с. 232.

նիչները համարվում էին առաջին բնագծի պաշտպանները: Նման պաշտպանության կիրառությունը հետագայում աղացուցեց, որ ամենաարդյունավետ ՀՕՊ-ի համակարգը սկսվում է կործանիչով, քանի որ ՀՕՊ-ի միայն այս միջոցն է սեփական սահմաններից առավելագույնս հեռու պայքարում հակառակորդի օդուժի դեմ և ամենաարագն արձագանքում հակառակորդի օդուժի զարգացումներին:

Երկրորդ համաշխարհային պատերազմից (ԵՀՊ, 1939-1945 թթ.) առաջ զարգացած երկրներում աշխատանքներ էին տարվում ՀՕՊ-ի հայտնաբերման և ուղղորդման նոր միջոցների՝ ռադիոտեղորոշման կայանների (ՌՏԿ) ստեղծման ուղղությամբ: Այդ սարքերի միջոցով տեղեկություն էր ստացվում նաև ինքնաթիռի թռիչքի ուղղության և արագության մասին: ԱՀՊ-ի հետ համեմատած՝ օդուժում ռմբակոծիչ ավիացիայի տեսակարար կշիռն ավելացել էր 2,5 անգամ[2]: ՌՏԿ-ների դերը գնալով բարձրանում էր, իսկ ՀՕՊ-ի կազմակերպումը դառնում էր բարդ գործընթաց, որում պարտադիր էր կործանիչների և այլ միջոցների միասնական ղեկավարումը: 1944 թ. ՀՕՊ-ի կործանիչային օդուժի պարեկային սկզբունքով գործելու դեպքում, հակառակորդի յուրաքանչյուր խոցած ինքնաթիռի համար պահանջվել է 170 մարտական թռիչք, իսկ օդանավակայաններում մարտական հերթապահություն վարելիս, ինչը կատարվում էր ՌՏԿ-ների շնորհիվ, հակառակորդի յուրաքանչյուր խոցած ինքնաթիռի համար պահանջվել է ընդամենը 21,4 մարտական թռիչք[3]:

ԵՀՊ-ի օդային մարտերի ամբողջ ընթացքը իրենից ներկայացնում է հենց ՀՕՊ և ՌՕՈՒ զորքերի միավորման անհրաժեշտության քննարկում: Պատերազմող բոլոր երկրներն էլ ունեցան խնդիրներ՝ կապված կործանիչ ավիացիայի և ՀՕՊ զորքերի համատեղման հետ: Հարցը հատկապես սուր էր ԽՍՀՄ-ում, որտեղ կործանիչները առանձին էին ՀՕՊ-ից[4]: Բացառությունը միայն Անգլիան էր, որի ՀՕՊ-ն ամենաբարձր կենտրոնացվածության մակարդակի էր հասցվել: Այնպես որ, երբ 1940 թ. հուլիս ամսից սկսած ֆաշիստական Գերմանիան սկսեց Բրիտանական կղզիների մասսայական ռմբակոծությունները (Ճակատամարտ Անգլիայի համար), պարզվեց, որ գերմանական ավիացիան ի վիճակի չէ կոտրել անգլիական դիմադրությունը: Ավարտվեց պատմության մեծագույն օդային մարտերից մեկը, որի արդյունքում Գերմանիան կորցրեց ավելի քան 1700 ինքնաթիռ[5]: Ռազմական տեսաբանները միակարծիք են, որ անգլիական կործանիչների գործողությունների արդյունավետության գրավականը նրանց հմուտ ղեկավարումն էր գետնից: Առհասարակ անգլիական ՀՕՊ-ը ԵՀՊ-ում ցուցադրել է հիանալի արդյունավետություն: Դեպի կղզի բարեհաջող արձակած գերմանական մոտ 6000 «Ֆաու-1» հրթիռներից 1847-ն օդում ոչնչացրել են կործանիչ օդաչուները, 1878-ին խոցել են զենիթայինները, իսկ 232-ը դիմել են ահեռասատներին:

Ֆաու-1

ԵՀՊ-ից հետո ՀՕՊ-ի զարգացումը նշանավորվեց մեկ այլ հեղափոխական առաջընթացով, որը կապված էր զենիթահրթիռային համալիրների (ԶՀՀ) հետ: Դրանք պատերազմի ընթացքում աննշան կիրառում էին ունեցել: Նոր համալիրների անհրաժեշտությունն առաջին հերթին պայմանավորված էր միջուկային սպառազինության գոյությամբ: Հարցն այն է, որ եթե նախկինում ՀՕՊ-ի մակարդակի մասին կարելի էր խոսել հակառակորդի խփված և բաց թողնված ինքնաթիռների հարաբերությամբ, ապա հետպատերազմյան տարիներին բաց թողնված թեկուզ մեկ ինքնաթիռը կարող էր կաթվածահար անել ամբողջ պետություն: Հետևաբար, հարկավոր էր մի գերձայնային, անվրեպ զենք, որը կխոցեր հակառակորդի բոլոր ինքնաթիռները: ԶՀՀ-ների ստեղծման համար, բացի վերը նշվածից, կար ևս մեկ պատճառ: ԵՀՊ-ի արդյունքում պարզվեց, որ ԶՀ-ն, ինչքան էլ որ զարգացել էր ԱՀՊ-ից հետո, միևնույն է, ավիացիայի զարգացման տեմպերից հետ էր մնում: Պատերազմի ընթացքում ԶՀ-ի կողմից խոցված յուրաքանչյուր ինքնաթիռի համար մեծ տրամաչափի հրանոթները ծախսում էին 200-300 արկ, միջին տրամաչափի հրանոթները ծախսում էին 400–500 արկ, իսկ փոքր տրամաչափի հրանոթները՝

2. Советская военная энциклопедия, т. 2, с. 203.
3. ЦАМО, ф. 112, оп. 158791, д. 1, л. 35-36.
4. ЦАМО РФ, ф. 35, оп. 11280, д. 126, л. 22; Н. А. Светлишин, Войска ПВО в Великой отечественной войне, М., 1979, с. 10-11.
5. Б. В. Соколов, Сто великих войн, М., 2004, с. 443; О. М. Чернякевич, И. Н. Чернякевич, И. С. Чернякевич, Великие битвы XX века, М., 2002, с. 231.

Կործանված Ու-2, 1960 թ.

700–800 արկ[6]: Եվ այս ցուցանիշներն այն պայմաններում էին, երբ ինֆնաթիռների արագությունն առավելագույնը 600-700 կմ/ժ էր: Իսկ ռեակտիվ դարաշրջանի հենց սկզբից այդ արագությունն արդեն ավելացել էր մոտ 30 տոկոսով:

ԶՀՀ-ների առաջին մարտական կիրառությունն աղացուցեց նրանց հուսալիությունը և անհրաժեշտությունը: Ներկայումս նման համալիրներով են զինված բոլոր զարգացած պետությունների ՀՕՊ զորքերը: Հետագա պատերազմներում ցանկացած պետության ՀՕՊ-ն աղահովելու համար նման համալիրները և կործանիչ օդուժը կատարել են առանցքային դեր:

Ռեակտիվ օդուժի դարաշրջանում ՀՕՊ-ի կենտրոնացման միտումը շարունակում է արդիական լինել: Ասվածը հիմնավորվում է նաև «սառը պատերազմի» տարիների խորհրդա-ամերիկյան հակամարտության մի շարք դրվագներով:

1960 թ. մայիսի 1-ին ներկայիս Եկատերինբուրգ քաղաքի մոտակայքում խորհրդային նորագույն «Ս-75» ԶՀՀ-ի միջոցով խոցվեց ամերիկյան «Ու-2» հետախույզ ինֆնաթիռը:

Ամերիկյան հետախույզին օդում «որսալու» գործողության ժամանակ խորհրդային ՀՕՊ-ի կործանիչների և ԶՀՀ-ների գործողությունների ոչ միակենտրոն ղեկավարման պատճառով թույլ տրվեցին մի քանի առանցքային սխալներ և ծախսվեց մեծ ժամանակ՝ մոտ քսանհինգ րոպե[7]: Արդյունքում խոցվեց նաև խորհրդային մեկ «ՄիԳ-19» կործանիչ, որին ընդունել էին որպես «Ու-2»[8]:

Այս հակաօդային մարտը կործանիչ օդուժի և ՀՕՊ-ի այլ ստորաբաժանումների փոխգործողությունների անբավարար կազմակերպման տիպիկ օրինակ է, որը բացահայտում է նման միջոցներով ՀՕՊ-ի կազմակերպման բարդությունը: Մասնավոր օրինակ լինելով՝ այն ցույց է տալիս, որ մեկ հրամանատարության տակ չլինելու դեպքում ՀՕՊ-ի մեջ ներգրավված նույնիսկ հսկայական ուժերը կարող են անարդյունավետ գործել:

ՀՕՊ-ի և օդուժի հակամարտության պատմության մեջ նոր էջ գրվեց վիետնամական պատերազմում, որտեղ առաջին անգամ մեծ քանակով կիրառված «Ս-75» ԶՀՀ-ները, ռեակտիվ ավիացիան և այլ հրթիռային սպառազինությունը կիրառվում էին մասսայաբար: Վիետնամական ՀՕՊ-ի գործողությունների հաջողությանը նպաստում էին մոտակայքում տեղակայված խորհրդային նավերը, որոնք ամերիկյան ավիացիայի թռիչքները հայտնաբերում էին բավականին մեծ հեռավորությունից և վիետնամցիներին նախապես տալիս իրավիճակի մանրամասն պատկերը[9]:

Միջուկային ռումբերով և հրթիռներով սպառազինված նորագույն ռմբակոծիչների՝ ճշգրիտ և սեփական սահմաններից առավելագույնս հեռու խոցելու խնդիրը լուծելու համար 1950-60-ական թթ. ի հայտ եկան օդային նշանակետերը խոցող համակարգեր, որոնց մեջ մտնում էին կործանիչ ինֆնաթիռներն իրենց հրթիռներով, իսկ օդային մարտը սկզբից մինչև վերջ ղեկավարվում էր գետնից: Օդային հակառակորդին հայտնաբերելուց սկսած՝ կործանիչը թռչում էր վերգետնյա համակարգերի ուղղորդմամբ՝ մինչև հակառակորդին հանդիպելը:

Զարգանում էին նաև ՀՕՊ-ի պաշտպանության երկրորդ էշելոնը կազմող ԶՀՀ-ները: Ավելին՝ նրանք ևս իրենց հերթին ունեին մի քանի շերտեր: Քանի որ նման կործանիչների գործողությունների համար անհրաժեշտ էին ավելի շատ, և որ կարևորն է, առանձին ՌՏԿ-ներ, պատ ընդհանուր հայտնաբերման և իրավիճակի տեղեկացման նպատակով առաջանում էր ուժերի քանակային մեծացման անհրաժեշտություն: Ելնելով այս ամենից՝ 1952 թ. ԽՍՀՄ-ում բոլոր վերգետնյա հայտնաբերման և ուղղորդման ռադիոտեխնիկական միջոցները միավորվում են ՀՕՊ-ի ընդհանուր ռադիոտեխնիկական զորքերի հետ: Նմանատիպ միավորում ԱՄՆ-ում կատարվել էր շատ վաղուց: Փաստորեն, կործանիչ ավիացիայի և ԶՀՀ-ի համագործակցությունը նորից հանգեցնում էր համատեղման:

---

6. Тактика / Под ред. В. Г. Резниченко. — 2-е изд., перераб. и доп. militera.lib.ru/science/tactic/index.html
7. Ակնհայտ է, որ ՀՀ ՀՕՊ-ի միջոցները հակառակորդի դեմ պայքար վարելու համար այդքան ժամանակ չեն կարող ունենալ:
8. Вестник Воздушного Флота, ноябрь-декабрь. 1998, с. 42-45.
9. А. Розин. Советские моряки в оказании интернациональной помощи Вьетнаму в обретении независимости и отражении американской агрессии. http://www.duma.gov.ru/csecure/arc3/news/20.html

Ժամանակակից պատերազմները և հիմնախնդիրը

Երկու զորատեսակների միավորման կամ համագործակցության խնդիրը քննարկելիս շատ հետաքրքիր է անդրադառնալ արաբա-իսրայելական տեղային պատերազմի փորձին, որոնք իրենց բնույթով շատ մոտ են ժամանակակից պատերազմներին:

Իսրայելական ՀՕՊ զորքերը մինչև 1965 թ. գործում էին որպես առանձին զորատեսակ: Նույն թվականին իսրայելական զորքերը, սանձալով ամերիկյան «Հոկ» ՁՀՀ-ներն անցան զորատեսակների ամերիկյան կառուցվածքին: Այսինքն՝ ՀՕՊ զորքերը ենթարկվեցին ՌՕՈՒ-ին[10]: ԽՍՀՄ-ն արաբական երկրներին ակտիվորեն առաքում էր տարատեսակ ՁՀՀ-ներ: Սուեզի ջրանցքի շրջակայքում խորհրդային զինվորականներն անձամբ կազմակերպել էին հզոր, անանցանելի ՀՕՊ-ի պատնեշ, որը համեմատում էին միայն Մոսկվայի ՀՕՊ-ի հետ: «Դատաստանի օրվա» պատերազմին նախապատրաստվելիս, հաշվի առնելով նախորդ պատերազմի դառը փորձը, արաբները զինվել էին խորհրդային ժամանակակից ՁՀՀ-ների մեծ քանակով: Եգիպտական և սիրիական կողմերը միասին ունեին ավելի քան 180 ՁՀՀ՝ միաժամանակյա մոտ հազար արձակման կայաններով[11]: Միայն Սիրիան ուներ ՀՕՊ-ի 38 դիվիզիոն՝ չհաշված մոտ երկու հազար կրովի ՁՀՀ-ները, ՁՀ միջոցները և ավելի քան 400 կործանիչները: Պատերազմի արդյունքը հայտնի է. արաբական երկրները, չնայած միջոցների ահռելի քանակին և խորհրդային զինվորականների միջամտությանը, միևնույն է, պարտություն կրեցին:

Արաբական կողմի կրած պարտության պատճառներից մեկը, մասնագետների կարծիքով, հանդիսանում է մարտական գործողությունների վարման շրջանի ՀՕՊ-ի աղահովման խորհրդային մոդելը, համաձայն որի՝ ՀՕՊ-ը կործանիչային ավիացիայի հետ ընդամենը համագործակցում էր: Արաբների արձակած հրթիռների քանակը հասնում էր երկու հազարի՝ խոցված մոտ 120 իսրայելական ինքնաթիռների դիմաց: Իսկ սխալ արձակումների արդյունքում սեփական խոցված ինքնաթիռների քանակն անցնում էր 55-ից[12]:

Արաբա-իսրայելական հաջորդ պատերազմի ժամանակ (1982 թ.) իրադրությունը բավականին փոխվել էր: Սիրիական ՀՕՊ ուժերն ավելի էին մեծացել քանակապես: Դրանք արդեն կազմում էին խորհրդային մի քանի տեսակի ՁՀՀ-ների 128 դիվիզիոն՝ չհաշված խորհրդային նոր «ՄիԳ-23» կործանիչները, որոնք համեմատած նախորդ խորհրդային կործանիչների հետ՝ զգալիորեն անկախ և ինքնուրույն էին օդային մարտում[13]: Մարտական գործողություններն ավարտվեցին սիրիական կողմի բացահայտ ջախջախմամբ: Իսրայելական ՌՕՈՒ-ն, օդում միայն ցամաքային ՀՕՊ-ից կրելով չնչին կորուստներ, մեծ վնաս հասցրեցին սիրիական ՌՕՈՒ-ին և ՀՕՊ-ին:

Պատճառները քննարկելիս մասնագետները նորից եկան այն եզրակացության, որ սիրիական ՀՕՊ-ի բրիգադները միմյանց հետ անգամ նորմալ կապ չեն կարողացել աղահովել, իսկ ՀՕՊ-ի և ՌՕՈՒ-ի միջև կապ՝ որպես այդպիսին, գրեթե չի եղել: Օդային իրադրության ամբողջ տեղեկատվությունը ստանում և հստակ վերահսկում էին ամերիկյան հեռակա հայտնաբերման և ղեկավարման «Ե-2Ց Հոկայ» ինքնաթիռները: Այսինքն՝ հաջողությունը աղահովում էր բարձր համագործակցությունն ու կազմակերպվածությունը: Հետագայում այս հատկանիշները հաշվի առնվեցին չորրորդ սերնդի կործանիչների ստեղծման ժամանակ: Դրանցից շատերը օդային մարտի համար գրեթե ամբողջ տեղեկատվությունը ստանալով, մշակում են, փոխանցում այլ տեսակի կործանիչներին և ղեկավարում մարտը: ՌԴ ՀՕՊ-ի կործանիչ ավիացիայի նախկին հրամանատար, գեներալ-գնդապետ Վ. Անդրեևի խոսքերով՝ «ՄիԳ-31»-ը «U-300»-ի թռչող դիվիզիոն է[14]: Այսինքն՝ իր արագ տեղաշարժվելու և երկար տևելու հնարավորությամբ այս կործանիչը

10. О. Грановский, Войска ПВО АОИ. http://www.isayeret.com/units/air/7298/article.htm, http://www.isayeret.com/units/air/egrophan/article.htm, http://www.iaf.org.il/
11. М. А. Жирохов. История ВВС Израиля. М.-Минск, 2001, с. 215.
12. М. А. Жирохов. История ВВС Израиля. М.-Минск, 2001, с. 235.
13. В. А. Золотарёв. «Россия (СССР) в локальных войнах и военных конфликтах второй половины XX века». М., 2000, с. 248.
14. Вестник Воздушного Флота, ноябрь-декабрь, 2003, с. 25.

Ե-2Ց Հոկայ

ընդունակ է հսկել օդային հսկայական տարածքներ:

Վերը բերված բոլոր տեխնիկական միջոցները և սպառազինությունն իրենց բնույթով կենտրոնացված և համատեղ կիրառության օրինակներ են, որոնք հիմնավորում են վերգետնյա և կործանիչային ՀՕՊ-ը միավորելու անհրաժեշտությունը: Նրանց համատեղումը մեկ զորատեսակի մեջ կենսական անհրաժեշտություն է, սակայն այդ դեպքում, փաստորեն, ստեղծվում է ՌՕՈՒ-ի և ՀՕՊ-ի կործանիչային ավիացիա: Իսկ որքանո՞վ է դա նպատակահարմար ներկայիս իրավիճակում ՀՀ ԶՈՒ-ի համար: Հարցադրումը կքննարկենք նյութի եզափակիչ մասում:

Հանրահայտ է, որ մարտում ցամաքային զորքերի (ՑԶ), օդուժի և ՀՕՊ ստորաբաժանումների և զորամասերի համագործակցության կարելի է հասնել համատեղ և միաժամանակյա գործողություններով: Դրանով հնարավոր է համաձայնեցնել տարբեր զորատեսակների հարվածները՝ ըստ ժամանակի, նպատակի և տեղի, և հասնել մեծ արդյունավետության:

Դժվար չէ նկատել, որ մարտի ժամանակ այս բոլոր պահանջները պահպանելը դժվարին գործ է: Ապակենտրոնացված ղեկավարման համակարգը բարդացնում է զորքերի ընդհանուր ղեկավարումը: Միասնական հրամանատարության բացակայության պայմաններում առանձին դեպքերում անխափան կապը պահպանելն իսկ բարդ խնդիր է դառնում: Էլ չենք խոսում հրամանատարներից մեկի սուբյեկտիվ որոշման հետևանքով՝ մյուս զորատեսակների բնականոն գործունեությանը խանգարելու հավանականության մեծացման մասին: Ռազմարվեստի պատմության ընթացքում անհաջող ելքով գործողությունների մեջ մեծ տեղ են զբաղեցնում վատ կամ խափանված կապի պատճառները:

ԽՍՀՄ-ի քայքայումից հետո ՆԱՏՕ-ի ղեկավարությունը, վերանայելով ռազմական հայեցակարգը, ձեռնարկեց ԶՈՒ-ի բարեփոխումներ: Քննարկվեց եվրոպական մասում ՌՕՈՒ-ի և ՀՕՊ-ի միավորումը մեկ ինֆորմացիոն դաշտի մեջ, որի տակ հասկացվում էր նրանց կենտրոնական ղեկավարումը՝ «Ակկս» համակարգը: Համակարգի մեջ պետք է ներդրվեին նորագույն, հատկապես շարժական հետախուզական համալիրներ: Մեծ դեր էր հատկացվում «ԱՎԱԿՍ» թռչող համալիրներին: Որպես զինատեսակներ՝ օդուժը, ԶՀՀ-ները, ԶՀ-ն և ՌԷՊ-ը պետք է միավորվեին կենտրոնացված ղեկավարման տակ:

ՆԱՏՕ-ի ղեկավարության կողմից 1994-97 թթ. անցկացված զորավարժությունները և փորձարկումներն ի հայտ բերեցին որոշակի թերություններ, որոնց վերացման արդյունքում ձևավորվեց աշխատանքի հիմնական սկզբունքը: ՆԱՏՕ-ի ղեկավարությունը որոշեց վերջնական կենտրոնացումն իրականացնել ոչ միանգամից՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ դաշինքի մեջ են ընդգրկվել նոր պետություններ: Ներկայումս ընթանում է ՆԱՏՕ-ի եվրոպական ՌՕՈՒ-ի և ՀՕՊ-ի միավորման վերջին փուլը:

Ելնելով այս և մի շարք այլ հիմնահարցերից՝ ՌԴ բանակը 1998 թ. միավորեց ՌՕՈՒ-ն ու ՀՕՊ-ը: Այս ճանապարհը վաղուց անցել են այնպիսի պետություններ, ինչպիսիք են՝ ԱՄՆ-ը, Գերմանիան, Դանիան, Հունաստանը և Իսրայելը:

Եզրակացություն

Այսուհանդերձ, վերը շարադրյալը չի կարող միանշանակ պնդումների և անցյալի ամբողջ ժառանգությունը մեխանիկորեն մերժելու հիմք հանդիսանալ: Երկար տարիներ երկու զորատեսակները մեզանում գործել են առանձին: Այս ընթացքում ձևավորվել են ավանդույթներ, գործողությունների հիմունքներ և տեսություններ: Միավորելով այդ երկու զորատեսակները՝ հարկավոր է այդ ամենը վերանայել և մանրամասնորեն մշակել նոր նորմեր ու կանոններ՝ հաշվի առնելով նաև նոր մարտահրավերները: Ուժերի համատեղումը և միակենտրոն ղեկավարումը գրեթե միշտ գործնականում ունեցել է դրական հետևանքներ, սակայն այդ ամենը հարկավոր է անել խելամտորեն: Համոզված ենք, որ դրանով պետության անվտանգությունն էլ ավելի կամրապնդվի:

Անդրադառնանք օդուժի և ՀՕՊ զորքերի՝ մեկ զորատեսակի մեջ միավորման հատակ քայլերին: Այս ռազմավարական քայլը, որը պետական կարևոր նշանակություն ունի, պետք է ունենա իր ռազմա-տեխնիկական և տնտեսական հիմքերը:

Կատարելագործվելով՝ ՕՀՄ-ները դառնում են առավել հզոր և արագ գործող համալիրներ, ձեռք բերում ավելի շատ խնդիրներ լուծելու հնարավորություն: Մեծանում է նրանց կիրառության տարածական և ժամանակային խորությունը: Իրողությունը ստիպում է վերանայել մեր հայացքներն առհասարակ օդուժի և ՀՕՊ-ի մասին:

Միգ-31

Ներկայումս ՀՕՊ-ը բաղկացած է բազում ավտոմատացված միջոցներից և համակարգերից, որոնք աշխատում են բարդ համագործակցությամբ: ՀՕՊ-ի ֆունկցիաների մեջ է մտնում յուրային բոլոր ԹՍ-ների վերահսկողությունը, որով այն ինչ-որ կերպ վերահսկում է նաև ՌՕՈՒ-ին: Սակայն օդուժի գործողությունների ռադիոտեխնիկական աղահովումը կատարելով՝ ՀՕՊ-ը չի ենթարկվում այդ վարչությանը: ՀՕՊ-ի կիրառության ամենամեծ հավանականությունն առաջանում է այն ժամանակ, երբ հավանական է նաև սեփական ՌՕՈՒ-ի կիրառումը: Հետևաբար, ՀՕՊ-ի ստորաբաժանումները պետք է աղահովեն սեփական օդուժի տեղաշարժը և նույն օդային տարածքում կանխեն հակառակորդի թռիչքները: Թե՛ մեր, թե՛ հակառակորդի կողմից թռիչքները կարող են լինել բավականին ինտենսիվ՝ յուրա-քանչյուրի կողմից օրական մի քանի տասնյակ: Նշվածին հարկավոր է ավելացնել նաև քաղաքացիական ինքնաթիռների չվերթները, որոնք ևս հարկավոր է վերահսկել ոչ պակաս խստությամբ: Սեփական և հարևան պետությունների տարատեսակ ԹՍ-ների քանակը տարեցտարի ավելանում է, գումարած նաև այն հանգամանքը, որ պատերազմի ժամանակ հայկական ավիացիոն բեռնափոխադրումները ահռելի չափով կաճեն: Այս ամենը հարցադրումը ավելի է բարդացնում և պահանջում անհապաղ լուծում: Այսպիսով՝ ներկայումս ՀՕՊ-ի առաջնակարգ խնդիրներն են՝

○ պետական օդային սահմանի պահպանում և վերահսկողություն,

○ օդային սահմանների անընդհատ հետախուզում,

○ անցանկալի օդային օբյեկտների հայտնաբերման դեպքում դրանց բնութագրերի և չափանիշների որոշում, համապատասխան ռազմական և ղեկավար մարմիններին ճիշտ և ժամանակին զեկուցում,

○ պետական և ռազմական կարևոր օբյեկտների (վարչական, արդյունաբերական-տնտեսական շրջաններ), զորախմբերի հավաքատեղիների (այդ թվում նաև զորքերի շարժի ժամանակ), հրամանատարական կետերի և այլ շինությունների պահպանումը հակառակորդի օդային հարվածներից:

Վերը նշված բոլոր խնդիրների բարեհաջող կատարման համար ՀՕՊ-ը պետք է լինի ակտիվ, բազմանպատակային, շարժունակ, օպերատիվ, խանգարումների և դիվերսիաների նկատմամբ կայուն, համաեղանակային, գործողությունների և ֆունկցիաների մեծ սպեկտրում ավտոմատացված:

Այդ զորատեսակի զարգացման մեջ հատուկ ուզում ենք ներկայացնել այն հանգամանքը, որ բոլոր երեք հարթություններում ընդլայնվել են նաև ՀՕՊ-ի հսկողության տակ գտնվող տարածքային սահմանները: Դրանք սկզբից սահմանափակվում էին մեկ-երկու օբյեկտներով, իսկ ներկայումս պետության ողջ տարածքի օդային սահմանները պետք է հնարավորինս հավասարաչափ վերահսկելի և պաշտպանված լինեն: Հարկավոր է օդային տարածքը վերահսկել ամբողջ սահմանով՝ ամենացածր բարձրություններից մինչև հնարավորին ամենամեծ բարձրությունների վրա:

ՀՕՊ-ի տեսադաշտի լիարժեքություն նշանակում է ՀՀ լրիվ տարածքները, ինչպես նաև՝ հարևան պետությունների տարածքների զգալի մասը: Ներկայումս այդ տեսադաշտն աղահովվում է վերգետնյա ՌՏԿ-ների շնորհիվ: Այդտեղ կան որոշակի խնդիրներ՝ կապված ՀՀ լեռնաանտառային կտրված տեղանքի հետ: Հետևաբար հարկավոր է կիրառել ռադիոլոկացիոն և այլ հայտնաբերման տարատեսակ միջոցներ՝ լիարժեք օդային տեղեկություն և խոցման ավելի մեծ հնարավորություն ստանալու համար: Այստեղ տեղին է հիշել օդաղարիկների, դիրիժաբլների և այլ ԱԹՍ-ների հիման վրա ստեղծված հետախուզության, կապի աղահովման և օդային ղեկավարման կետերի մասին:

Չնայած նրան, որ տեղային պատերազմներում ԶՀ կիրառությունը դեռ բավականին արդյունավետ է, միևնույն է, ոչ մի ՀՕՊ չի կարող միայն վերգետնյա համակարգերով ու սպառազինությամբ նման ամենատես ու օպերատիվ ցանց աղահովել:

ԶՀՀ-ների կիրառման փորձը գալիս է աղացուցելու, որ մեկ խոցված ինքնաթիռի վրա համալիրները ծախսում են միջինը հինգ հրթիռ[15]: Մինչ օրս լավագույն ցուցանիշը աղահոված ամերիկյան «Փետրի-

15. Н. Я. Василин, А. Л. Гуринович, Зенитные ракетные комплексы, Минск, 2002, с. 397, 423-424.

Ռ-2

ոs» ԶՀՀ-ն Իրաքում յուրաքանչյուր խոցված ԹՍ-ի համար ծախսել է 1-3 հրթիռ[16]: Իհարկե, տվյալը հիմնականում վերաբերում է հրթիռների խոցմանը, ինքնաթիռները խոցվել են ավելի լավ ցուցանիշներով, սակայն կիրառությունը մասսայական չէ, իսկ հակառակորդը հզոր չէ:

Զարգացած պետությունները ՀՕՊ-ի աղահովման համար օգտագործում են տարատեսակ կործանիչներ, օդային մարտի ղեկավարման ու հետախուզման թռչող համակարգեր և, ինչու չէ, նաև հետախուզական արբանյակներ: ՌՕՌԻ-ի և ՀՕՊ-ի միավորման մասին ծավալելով նման քննարկում՝ մենք պարտավոր ենք հատուկ նշել նաև կործանիչային ավիացիայի մասին, առանց որի անհնար է ունենալ հզոր ՌՕՌԻ և ՀՕՊ: ԱՄՆ-ի ՀՕՊ հիմնական գործիքը մնում են կործանիչները: Հայկական ՌՕՌԻ-ի համար անհրաժեշտ է մի այնպիսի կործանիչ ինքնաթիռ, որը, օդային պայքարի և օդային հարձակման միջոցների խնդիրների համատեղումից զատ, իր որակով նաև հակակշիռ կհանդիսանա աղբեջանական բանակին: Կան մի քանի տարբերակներ, որոնց մասին կնշենք առանձին:

Բացառված չէ, որ հակառակորդը, օգտագործելով քաղաքացիական ինքնաթիռների թռիչքները, չեզոք պետության տարածքից մարտական ինքնաթիռով փորձի հարվածներ հասցնել: Հարևան պետություններից մեկի հեռավոր սահմանների վրա հակառակորդի մարտական ինքնաթիռները կարող են աննկատ մոտենալ մեր ինքնաթիռին և, շատ մոտ թռչելով, հասնել մինչև Երևան, քանի որ մոտենալու պահին մեր ՌՏԿ-ները չեն կարող վերահսկել քաղաքացիական ինքնաթիռի թռիչքը: Մեր սահմանը մտնելու պահին ՌՏԿ-ների հետևող սարքերի վրա դրանք կարող են երևալ որպես մեկ ինքնաթիռ: Նման պայմաններում շատ դժվար է կանխել դիվերսիան:

Այդ և վերը նշված մյուս պատճառներով անհրաժեշտ է մեկտեղել օդային հետախուզության և վերահսկողության բոլոր միջոցները: Օդային վերահսկողության և հետախուզական ամբողջ տեղեկատվությունը մեկ կենտրոնում կուտակելով, համատեղ գործողություններով և մեկ կենտրոնից ղեկավարելով՝ զգալիորեն նվազում է տարատեսակ խանգարումների և հակազդեցությունների կիրառումը, ինչպես նաև զգալիորեն բարձրանում է ցանկացած ԹՍ-ի հայտնաբերման ճշտությունը:

Համատեղ զորատեսակի կենտրոնացված ղեկավարումը թույլ կտա ավելի արագ և ստույգ տեղեկություն ստանալ ՀՕՊ յուրաքանչյուր համալիրից, հետախուզման և հսկողության յուրաքանչյուր կենտրոնից ու ՌՏԿ-ից: Միջոցները կարող են տեղակայված լինել հանրապետության ողջ տարածքում: Իրական ժամանակում ստացվող այդ տեղեկատվությունը մշակվելով՝ հրամանատարական կետից կարող է հաղորդվել տվյալ շրջանում գործող ՀՕՊ համակարգերին, ռազմական և քաղաքացիական ավիացիային՝ թույլ տալով խուսափել հակառակորդի հետ անցանկալի հանդիպումից, կրկնակի հարվածներից, օդային բախումներից և այլն: Տեղեկատվության հավաքումը և բաժանումը պետք է կատարել թվային ազդանշանի հաղորդագրության գաղտնիության պահպանման բոլոր ժամանակակից եղանակներով: Հաշվի առնելով մեր տարածքային չափերը և ունեցած կամ ունենալիք միջոցների քանակը՝ այս ամենի կազմակերպումը լիովին հնարավոր է և կլինի ավելի արդյունավետ ու օգտակար:

Համատեղման արդյունքում, եթե հայտնաբերման և հետախուզական միջոցները գործեն անխափան, գրեթե բացառվում է ՀՀ օդային տարածքներում անցանկալի ԹՍ-ների հանկարծակի հայտնվելը, և զգալիորեն բարձրանում է հակահարված տալու ժամանակն ու հնարավորությունը:

Առաջարկը ՌՕՌԻ-ի և ՀՕՊ-ի համար զարգացման հաջորդ քայլ է: Այն պահանջում է լրացուցիչ ներդրումներ, հատկապես հայտնաբերման և ղեկավարման սարքավորումների կատարելագործում: Համատեղման և նման սարքավորումների ու համակարգերի տեղադրման դեպքում հրամանատարական կետում կարող են նաև ստանալ տեղանքի ընդհանուր կամ մասնակի էլեկտրոնային քարտեզագրում: Հրամանատարական կետում արտացոլված էլեկտրոնային քարտեզագրումը բազում հնարավորություններից զատ մեծացնում է ավիացիայի ղեկավարումը գիշերը և բարդ օդերևութաբանական պայմաններում: Ուղղաթիռներն այդ պայմաններում կարող են առանց վերգետնյա ուղղորդողների վայրէջք կատարել ամենաան-

16. Д. Галкин, Боевое применение зенитных пакетных комплексов Пэтриот в вооруженных конфликтах. ЗВО, 10.2006, с. 26-32.

ծանոթ վայրերում, ինչը մարական պայմաններում անգնահատելի դեր ունի ՑԶ-երի համար: Իսկ եթե ԹՍ-ները ևս հնարավորություն ունենան սանալ քարտեզագրման արտացոլում, ապա ավիացիայի մարտունակությունը զգալիորեն կբարձրանա: Զորատեսակների համատեղման և կենտրոնական ղեկավարման դեպքում կբարձրանա մարտի ղեկավարման ընդհանուր մակարդակը, մասնավորապես մարական ղեկավարման հրամանների օպերատիվ կազմումը և հասցեատերերին հասցնելը, տրված հրամանների կատարման արդյունքների ստուգումը և մարական իրավիճակի փոփոխման դեպքում արագ հակամիջոցների կազմակերպումը: Մեկ կամ մի քանի խմբերի մարական խնդրի կատարման ժամանակ ավտոմատ կամ կիսաավտոմատ կերպով կտեղեկացվեն բոլոր անհրաժեշտ ուժերը և միջոցները: Իսկ այն ուժերը, որոնք անմիջական կապ չունեն այդ խմբերի գործունեության հետ, չնախատեսված պայմաններում կարող են հեշտությամբ սանալ անհրաժեշտ տվյալներ:

Անխոցելիության բարձրացման նպատակով շատ կարևոր է համատեղ հրամանատարական կետի շարժական լինելը, որի համար այն անհրաժեշտ է տեղակայել բարձր անցունակության մեքենաների վրա՝ գերժամանակակից, հագեցած ամենաարդիական սարքավորումներով: Հրամանատարական կետը կարող է տեղակայված լինել նման ոչ մեկ մեքենայի վրա: Կարող է ունենալ մի քանի նման հրամանատարական կետեր, սակայն դրանք միաժամանակ չպետք է գործեն: Այդ փոփոխությունը և շարժունակությունը կարող է ապահովել լիարժեք անխոցելիություն: Բնականաբար, զորատեսակների համատեղման և կենտրոնական ղեկավարման դեպքում հարկավոր է, որ յուրային ԹՍ-ները հագեցած լինեն ավտոմատ պատասխանիչներով, որը բարդ, սակայն հուսալի և փորձված միջոց է: Հարկավոր է ավտոմատ կերպով հայտնաբերել ցանկացած ԹՍ՝ խիստ կրճատելով մարդու մասնակցությունն օդային տարածքի հետևման գործընթացին՝ երբեք հարթություններում սանալով սարքի լիարժեք կոորդինատներ:

ՀՀ տարածքային սահմանափակությունը կարևոր կռվան է կենտրոնացված ղեկավարման ներկայացված ձևին անցնելու համար և լրացուցիչ հնարավորություններ է տալիս բարձրացնելու ՀՕՊ-օդուժ միավորման արդյունավետությունը:

Մասնավորապես, մեր կործանիչները կարիք չունեն գամված լինել պաշտպանական տվյալ շրջանում՝ բացառապես ՀՕՊ-ի ապահովմանն ուղղված խնդիրներ լուծելու համար:

Լինելով մեկ հրամանատարի ենթակայության տակ և ծառայելով բոլորի շահերին՝ նրանք կարող են գործել և՛ որպես մարտավարական հարվածային համակարգեր, և՛ որպես հետախույզներ, և՛ որպես ՀՕՊ կործանիչներ: Ընդ որում, ստացված տեղեկատվությունը կարող են օգտագործել նաև այլ կործանիչներ, հարվածային ինքնաթիռներ, ուղղաթիռներ, վերգետնյա ՁՀՀ-ներ, շարժական կամ անշարժ ՀՕՊ այլ համալիրներ, այլ զորատեսակներ, քաղաքացիական ավիացիա և անգամ օդերևութաբանական ծառայություններ: Հզոր և ճկուն ՀՕՊ ապահովման համար մեծ դեր ունեն արագ շարժվող ՁՀՀ-ներն ու այլ կրակային միջոցները, որոնք շատ արագ փոխում են իրենց դիրքը և կարող են հայտնվել բավականին բարդ տեղանքներում:

Այս միավորումը նպատակահարմար է նաև նրանով, որ մեզանում չի կարող լինել ՌՕՈՒ-ի և բանակային ավիացիայի զատում, որը խնդիրներ կարող էր առաջացնել տվյալ դեպքում՝ կախված վերջինիս գործունեության հետ: Այսինքն՝ մեր մարական ավիացիան մշտապես գործում է հիմնականում ՑԶ-երի խնդիրների կատարումն ապահովելու ֆորմատում: Մարական ինքնաթիռների և ուղղաթիռների քանակը թույլ է տալիս ունենալ հարվածային կամ այլ խնդիրներ կատարող մեկ-երկու հզոր առանձին կամ խառը խմբեր (քանակի որոշակի ավելացման դեպքում հնարավոր է խմբերի կրկնակի ավելացում): Այդ խմբերը կարող են արագ խուսավարելով՝ գործել օպերատիվ, արագ և բավականին արդյունավետ: Իսկ նման խմբերի և ՀՕՊ ստորաբաժանումների համատեղ ու կենտրոնացված գործողությունները թույլ կտան խուսափել շատ սխալներից և ուժերի անտեղի վատնումից:

Անգամ խաղաղ պայմաններում այս երկու զորատեսակների համատեղումը և քաղաքացիական ավիացիայի ղեկավարման համակարգերի մեկտեղումը կարող է լուրջ միջոցներ խնայել, ինչը պետական և ռազմական գործում վերջին տեղում չէ:

Ներկայումս ռազմատեխնիկական և քաղաքական համաշխարհային զարգացումները նորանոր մարտահրավերների առաջ են կանգնեցրել ՀՀ ԶՈՒ-ին: Ընդ որում, ակնհայտ է, որ դրանք մեղմանալու միտումներ չունեն: Մեզանից պահանջվում են համարժեք պատասխաններ, որոնք պետք է քննարկել և, թեկուզ անհրաժեշտության դեպքում բովանդակային փոփոխություն կատարելով, կիրառել մեր պայմաններում: Այս դինամիկ տեմպերից դուրս մնալով՝ մենք կարող ենք ի վերջո վտանգել պետության անվտանգության երաշխիքները:

Նվազագույն աշխատավարձի սոցիալ-իրավական հիմնախնդիրները և դրանց լուծման օրենսդրական հնարավորությունը Հայաստանում

Արծվիկ Մինասյան

Հիմնախնդրի ընդհանուր նկարագիրը

Անկախացումից ի վեր Հայաստանի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձի սահմանման հիմնավորված մեխանիզմներ չեն գործել: 2003 թվականին ընդունված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրով փորձ արվեց նվազագույն աշխատավարձի չափը կապել աղքատության ընդհանուր գծի հետ, սակայն գործնականում այս մեխանիզմը չունեցավ արդյունավետ կիրառում, և լայն տարածում ստացավ «աշխատող աղքատներ» եզրույթը: Աղքատության հաղթահարման վերանայված ծրագրում, որն ստացավ Կայուն զարգացման ծրագիր անվանումը և ընդունվեց ՀՀ կառավարության կողմից 2008 թ., հիմնական թիրախներից համարվեց այս երևույթի վերացումը և նախատեսվեց, որ կապ պետք է հաստատվի նվազագույն աշխատավարձի և միջին աշխատավարձի միջև՝ նպատակ ունենալով նաև արդյունավետորեն հաղթահարել աղքատությունը:

ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի համաձայն, նվազագույն աշխատավարձը պետք է սահմանվի օրենքով և բավարարի արդարության չափանիշը:

Այլ կարևոր խնդիր է հանրային ծառայության վարձատրության նվազագույն չափի ամրագրումը:Հանրային ծառայության բազային վարձատրության վերաբերյալ ՀՀ կառավարության կողմից ի գիտություն ընդունված քաղաքացիական ծառայության 2010 թվականի զեկույցի համաձայն, հանրային ծառայության վարձատրության հիմնախնդիրներից է աշխատավարձի ցածր մակարդակը, որով պայմանավորված առկա են բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման իրական խոչընդոտներ, իսկ պետական և ոչ պետական հատվածում առկա միջին աշխատավարձերի մակարդակների միջև զգալի տարբերությունը ծնում է դեպի մասնավոր հատված հանրային ծառայողների արտահոսքի բարձր ռիսկ: Հետևաբար, որպես կարևոր քայլ, առաջարկվում է մասնավոր հատվածի նկատմամբ պետական հատվածի աշխատավարձի մրցունակությանն ուղղված գործողության նախաձեռնումը: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է կապ ապահովել երկրում առկա միջին աշխատավարձի և հանրային ծառայության վարձատրության միջև:

Միջազգային փորձը

Խնդրի լուծման համար կարևոր է նաև միջազգային փորձի դիտարկումը, որն առանձնացնում է նվազագույն աշխատավարձի սահմանման մի քանի հիմնադրույթներ: Դրանցից առավել տարածված են հետևյալ մոտեցումները. նվազագույն աշխատավարձի չափի սահմանման համար հիմք ընդունել կենսամիջոցների նվազագույնը, երկրում ընդունված միջին աշխատավարձի մակարդակը, նվազագույն աշխատավարձը դարձնել արդյունավետ գործիք արժանապատիվ աշխատանքի ապահովման, ինչպես նաև աղքատության կրճատման համար:

Կարևորվում է նաև նվազագույն աշխատավարձի սահմանման գործընթացում սոցիալական գործընկերների մասնակցությունը:

Ընդհանուր առմամբ, նվազագույն աշխատավարձի կարգավորման պրակտիկան առաջին անգամ դիտարկվել է Նոր Զելանդիայում և Ավստրալիայում 19-րդ դարի վերջին: Չնչին բացառություններով, նվազագույն աշխատավարձի սահմանումը կառավարության քաղաքականության հազվադեպ օգտագործվող և սահմանափակ գործիք էր մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը: Այդ ժամանակներից սկսած՝ իրավիճակն ասդիճանաբար սկսեց փոխվել, սակայն նվազագույն աշխատավարձի կարգավորման տարածման արագությունը և չափը որոշակիորեն տարբերվում էին իրարից՝ երկրների առանձին խմբերի համար: Մասնավորապես, զարգացած երկրներում առանձնանում են երեք հիմնական մոտեցում. երկրների մի խմբում (Ավստրիա, Դանիա, Ֆինլանդիա, Գերմանիա, Նորվեգիա, Իտալիա, Շվեդիա, Շվեյցարիա) չնայած առկա է նվազագույն աշխատավարձի կարգավորում, սակայն նրա կիրառումը սահմանափակված է աշխատողների շատ փոքր խմբով (օրինակ՝ տնային ծառայողներով) և նրա ազդեցությունը նվազագույն է: Այս երկրներում լայնորեն տարածված են կոլեկտիվ համաձայնագրերի համակարգերը, որոնք

ընդգրկում են աշխատավարձ ստացողների մեծ մասին: Այլ մոտեցում են որդեգրել Միացյալ Թագավորությունը և Իռլանդիան, որտեղ նվազագույն աշխատավարձը կարգավորվում է այն ճյուղերում, որտեղ բացակայում են արդյունավետ արհմիութենական կազմակերպությունները և աշխատավարձերը համարվում են անհիմն ցածր: Զարգացած երկրների երրորդ, ընդլայնվող խմբում ներառված են այն երկրները, որտեղ նվազագույն աշխատավարձի կարգավորումը վերաբերում է համարյա բոլոր աշխատողներին (օրինակ՝ Նոր Զելանդիա, Ավստրալիա, ԱՄՆ, Կանադա, Ճապոնիա, Ֆրանսիա, Իսպանիա, Պորտուգալիա, Լյուքսեմբուրգ, Հոլանդիա):

Նվազագույն աշխատավարձի օրենսդրությունը Լատինական Ամերիկայի երկրների մեծ մասում ընդունվել է 1930-40-ական թվականներին: Համարյա բոլոր այդ երկրներն ունեն իրավական ակտեր, որոնք պետության պարտականություն են համարում այնպիսի աշխատավարձի վճարման սահմանումը, որը կապահովի արժանապատիվ ապրելակերպ: Բոլոր դեպքերում, այլ տարածաշրջանների հետ համեմատած՝ լատինամերիկյան երկրներում նվազագույն աշխատավարձի կարգավորումը հիմնականում դիտարկվում է որպես աշխատավարձի մակրոտնտեսական քաղաքականության հիմնական գործիք, ինչն օգտագործվում է ավելի լայն տնտեսական ու սոցիալական նպատակների հասնելու համար:

Աֆրիկյան երկրներում նվազագույն աշխատավարձի օրենսդրական կարգավորման փորձը սկսվել է 1940-50-ական թվականներին և իր վրա մեծապես կրել է գաղութատեր երկրների փորձի ազդեցությունը: Ներկայումս համարյա բոլոր աֆրիկյան երկրներն ունեն նվազագույն աշխատավարձը կարգավորող ծրագրեր, որոնք հիմնականում սահմանում են ընդհանուր նվազագույն աշխատավարձ, որը վերաբերում է աշխատողների մեծամասնությանը: Ավելին, հաճախ նվազագույն աշխատավարձի կարգավորումը դիտարկվում է որպես աշխատավարձի շարժի և կառուցվածքի հիմնական որոշիչ:

Կարիբյան ավազանի նախկին բրիտանական գաղութների նվազագույն աշխատավարձի համակարգերը նման են Միացյալ Թագավորության համակարգին: Վերջին տարիներին մի շարք Կարիբյան ավազանի երկրներ վերանայել են իրենց հա-

մակարգերը՝ որոշումների ընդունման ավելի կենտրոնացված ձևեր ներդնելու նպատակով (Բահամներ, Ջամայկա, Տրինիդադ և Տոբագո): Կարիբյան ավազանի մնացած երկրների մեծ մասը նույնպես ունի նվազագույն աշխատավարձի կարգավորում, բայց այդ համակարգերը հաճախ չեն ճշգրտվում:

Ասիայում նվազագույն աշխատավարձի կարգավորումը որոշակիորեն տարբերվում է այլ զարգացող տարածաշրջանների փորձից: Այդ կարգավորումն այնքան լայնորեն տարածված չէ, ինչպես այլ տեղերում. որոշ ասիական երկրներում դեռևս բացակայում է այդ կարգավորումը կամ վերաբերում է միայն աշխատողների սահմանափակ թվի: Միայն Արևմտ. Ասիայի որոշ երկրներում է, որ նվազագույն աշխատավարձի կարգավորումն ունի լայն ծածկույթ (Աֆղանստան, Իրան, Իրաք, Լիբանան, Սիրիա, Թուրքիա): Նվազագույն աշխատավարձի ընդհանրական կիրառման երկար պատմություն ունի Ֆիլիպինները: Վերջին տարիներին ընդհանուր նվազագույն աշխատավարձեր են սահմանվել նաև Թաիլանդում, Նեպալում, Պակիստանում:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ նվազագույն աշխատավարձերը սահմանվում են ըստ տնտեսության ոլորտների և (կամ) զբաղմունքների, ազգային միասնական և տարածաշրջանային միասնական մակարդակով: Սովորաբար

տարածաշրջանային մակարդակով դրանք սահմանվում են դաշնային կառուցվածք ունեցող երկրներում, օրինակ՝ Կանադայում, ԱՄՆ-ում: Ազգային միասնական մակարդակով նվազագույն աշխատավարձի սահմանումն ամենատարածված մոտեցումն է, որն օգտագործում են երկրների 45%-ը: Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ) նվազագույն աշխատավարձը սահմանում է որպես աշխատավարձի կառուցվածքում շեմ, որը պաշտպանում է աշխատավարձերի բաշխման ստորին հատվածում գտնվող աշխատողներին: Այդ շեմը համընդհանուր քաղաքականության գործիք է, որը կիրառում են ԱՄԿ անդամ երկրների ավելի քան 90%-ը: Ներկայումս երկրների մեծ մասն ունեն օրենսդրորեն սահմանվող նվազագույն աշխատավարձեր:

Նվազագույն աշխատավարձի օրենսդրական համակարգը Հայաստանում

Հայաստանի Հանրապետությունում նվազագույն աշխատավարձի սահմանման օրենսդրական համակարգն ունեցել է զարգացման հետևյալ ընթացքը. 1992 թվականից սկսած մինչև 1995 թվականը ՀՀ Նախագահի հրամանագրերով պարբերաբար սահմանվում էին աշխատանքի վարձատրության ամսական և ժամային նվազագույն դրույքաչափերը, 1995 թվականի հունիսի 1-ից այն սահմանվեց ՀՀ Կառավարության որոշմամբ, 1996 թվականի հունվարի 1-ից՝ ՀՀ Վարչապետի որոշմամբ, իսկ 1999 թվականի հունվարի 1-ից՝ օրենքով (որն ընդունվեց 1998 թվականի հոկտեմբերի 27-ին): Օրենքի համաձայն 1999 թվականի հունվարի 1-ից հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանվեց 5000 դրամ, որը պահպանվեց մինչև 2003 թվականը ներառյալ: 2003 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունվեց «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի 2004 թվականի հունվարի 1-ից հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանվեց 13000 դրամ, որը 2006, 2007, 2008 և 2009 թվականի հունվարի 1-ից համապատասխանաբար սահմանվեց 15000, 20000, 25000 և 30000 դրամ: 2004 թվականի նոյեմբերի 9-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց ՀՀ

աշխատանքային օրենսգիրքը, որի 179-րդ հոդվածը սահմանում է, որ աշխատավարձի ամսական և ժամավճարի նվազագույն չափը սահմանվում է օրենքով:

Ինչպես վերը նշվեց, ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի երկրորդ մասով սահմանվում է. «Յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի, ինչպես նաև անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք»: Բացի այդ, Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է աշխատանքի վարձատրության հիմնահարցերը կարգավորող մի շարք միջազգային փաստաթղթեր:

Մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի առողջության ու բարեկեցության համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ սննդի, հագուստի, բնակարանի և առողջապահության ու սոցիալական անհրաժեշտ ծառայությունների իրավունք, ինչպես նաև գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ իր կամքից անկախ հանգամանքներում գոյության այլ միջոցներից զրկվելու դեպքում ապահովության իրավունք: 2004 թվականի դեկտեմբերի 13-ին Հայաստանը վավերացրել է «Նվազագույն աշխատավարձի սահմանման մասին», 2005 թվականի հոկտեմբերի 3-ին «Նվազագույն աշխատավարձի սահմանման ընթացակարգի մասին» ԱՄԿ համապատասխանաբար թիվ 131 և 26 կոնվենցիաները, իսկ 2003 թվականի դեկտեմբերի 25-ին՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան:

Նվազագույն աշխատավարձի արդարության հասկացությանն ու պահանջին է անդրադարձել «Վերանայված եվրոպական սոցիալական խարտիան», որը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2004 թվականի մարտի 1-ից: Խարտիայի 4-րդ հոդվածի (արդարացի վարձատրության իրավունքը) համաձայն, արդարացի վարձատրման իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով, Կողմը պարտավորվում է ճանաչել աշխատողների վարձատրման իրավունքը, ինչը նրանց և նրանց ընտանիքներին կապահովի պատշաճ կենսամակարդակ: Խարտիայի պահանջների բավարարման գնահատման համար նույն խարտիայի համաձայն ստեղծվել է Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողով, որը որոշում է, թե արդո՞ք խարտիայի կողմ հանդիսացող պետությունը համապատասխանում է խարտիայի դրույթներին: Առ այդ, այս հանձնաժողովը 2006 թվականին հրապարակել է նախադեպային իրավունքի վերլուծական փաստաթուղթը, որում անդրադառնալով «արդարացի վարձատրություն» հասկացությանը ամրագրել է, որ արդար համարվելու համար աշխատավարձը պետք է ամեն դեպքում տվյալ երկրի աղքատության գծից, այսինքն՝ երկրում միջին աշխատավարձի 50 տոկոսից բարձր լինի: Հանձնաժողովի կողմից ընդունված շեմն է 60 տոկոսը: Ընդ որում, հանձնաժողովի հաշվարկները հիմնվում են զուտ գումարների վրա, այսինքն՝ չհաշված հարկերն ու սոցիալական ապահովության վճարները: Սոցիալական տրանսֆերտները (օրինակ՝ սոցիալական ապահո-



վության նպաստները) հաշվի են առնվում այն դեպքում, երբ դրանք ուղղակիորեն կապված են աշխատավարձի հետ: Երկրում լրիվ հաստիքով աշխատողի զուտ միջին աշխատավարձը հաշվարկվում է՝ հաշվի առնելով աշխատուժի շուկայում գրանցված համապատասխան ցուցանիշը, կամ դրա բացակայության դեպքում՝ տվյալ ոլորտի, օրինակ՝ վերամշակող արդյունաբերության, նույնականման ցուցանիշը: Հանձնաժողովի փեսակետի համաձայն, եթե երկրում պաշտոնապես սահմանվել է նվազագույն աշխատավարձ, ապա վերջինիս զուտ արժեքը որպես հիմք է ծառայում զուտ միջին աշխատավարձի հետ համեմատության համար: Հանձնաժողովը միաժամանակ ամրագրել է, որ 60 տոկոսի շեմից ցածր զուտ աշխատավարձը Խարտիայի իմաստով ինքնըստինքյան չի համարվում անարդար: Եթե աշխատավարձը գտնվում է 50% և 60% միջակայքում, ապա պետությունը պետք է ապացուցի, որ տվյալ աշխատավարձը բավարար է պատշաճ կենսամակարդակ ապահովելու համար:

Այնուամենայնիվ, եթե զուտ աշխատավարձը ցածր է երկրում միջին աշխատավարձի կեսից, ապա այն համարվում է անարդար, և, հետևաբար, տվյալ պետությունում իրադրությունը գնահատվում է որպես խարտիային չհամապատասխանող:

Կարևոր է նաև այն, որ Հայաստանի ներպետական օրենսդրության մաս կազմող միջազգային պայմանագրերի համաձայն նվազագույն աշխատավարձը ենթակա չէ հարկման:

Խնդրի լուծման առաջարկվող օրենսդրական մեխանիզմը

Վերը նշված խնդիրների լուծման շրջանակներում Հայ Յեղափոխական Դաշնակցության պատգամավորական խմբակցությունը առաջարկում է երկրում նվազագույն աշխատավարձի չափը սահմանելիս հաշվի առնել գնաճի մակարդակը, կենսապահովման նվազագույն բյուջեն կամ սպառողական նվազագույն զամբյուղի արժեքը, ինչպես նաև միջին աշխատավարձը: Հանրային ծառայության ոլորտում առաջարկվում է ամրագրել աշխատավարձերի նվազագույն՝ բազային դրույքաչափերի և միջին աշխատավարձի միջև կապի սկզբունքը, որի համաձայն հանրային ծառայության բազային դրույքաչափը պետք է պակաս չլինի նվազագույն աշխատավարձի 120 տոկոսից: Առաջարկվում է նաև օրենսդրորեն ամրագրել դրույթ, որի համաձայն նվազագույն աշխատավարձը ենթակա չէ հարկման: Մեր համոզմամբ՝ օրենսդրական նախաձեռնությունների այս փաթեթի ընդունումը կապահովի նաև ստվերային տնտեսության, այս դեպքում՝ թաքնված զբաղվածության չափերի էական կրճատում, կոռուպցիայի էական նվազեցում, տնտեսական առաջընթաց և եկամուտների անհամաչափ բաշխման մեղմացում: Օրենսդրական նախագծերը մշակվել են հաշվի առնելով նաև Հայաստանի սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները: Առաջարկվող օրենսդրական փաթեթը համապատասխանում է սոցիալական պետության և սոցիալական արդարության գաղափարաբանությանը:

Ազգային շարժման վերելքը Վրաստանում (1987-1990 թթ.)

Արտակ ԶԱՐԳԱՐՅԱՆ

1985 թ. ԽՄԿԿ Կենտրոնական կոմիտեի ապրիլյան համաժողովի որոշմամբ, խորհրդային կայսրության պատմության մեջ սկսվեց սոցիալ-քաղաքական զարգացումների մի նոր փուլ, որի նպատակն էր վերափոխել ու վերակառուցել խորհրդային հասարակությունը: Նախաձեռնելով հսկայածավալ ու նվիրական աշխատանք ենթադրող նմանօրինակ գործընթաց՝ նրա ոչ բոլոր մասնակիցներն էին գիտակցում ու պատկերացնում այն դժվարություններն ու խոչընդոտները, որոնք կանգնած էին այդ ծրագրի իրականացման ճանապարհին: Սակայն մի բան առավել քան ակնհայտ էր. այլևս անհնարին էր ապրել հին ձևով: Ամբողջ կայսրությունը կորցրել էր զարգացման տեմպերը, կուտակվել էին մի շարք չլուծված հիմնախնդիրներ, նկատվում էին հասարակական կոռոզիայի տարրեր, ինչպես նաև կոմունիստական գաղափարախոսությանը խորթ միտումներ: Այս բոլոր երևույթները հանգեցրին տնտեսական, քաղաքական ու գաղափարա-

կան ճգնաժամի: Ստեղծված իրավիճակում անհրաժեշտ էին վճռական բարեփոխումներ կյանքի բոլոր բնագավառներում: Բարեփոխումների այդ հրատապ ծրագիրը ստացավ «վերակառուցում» անվանումը[1]:

Վերակառուցման գործընթացը Խորհրդային Միությունում սկսվեց «հրապարակայնության սկզբունքի» կիրառմամբ: Այս սկզբունքը ենթադրում էր այնպիսի կարևոր դրույթների կիրառում, ինչպիսին է հասարակական կարծիքի, խոսքի, մամուլի ու հայացքների ազատությունը: Այս գործընթացի արդյունքում ամբողջ կայսրության տարածքում սկսեցին ձևավորվել զանազան քաղաքական խմբակ-

Մերաբ Մամարդաշվիլի

ներ ու կազմակերպություններ, որոնք ունեին տարաբնույթ քաղաքական, գաղափարական ուղղություններ և հեռահար նպատակներ: Խորհրդային Վրաստանի տարածքում ձևավորված առաջին այդպիսի քաղաքական կազմակերպությունը, որ հիմնվեց 1987 թ., կրում էր «Իլյա Ճավճավաձեի միություն» անվանումը: Միության ծրագրային դրույթներից էին՝ Վրաստանի պետական անկախության վերականգնումը, դեմոկրատական կարգերի հաստատումը, տնտեսության մեջ կապիտալիստական մոդելի կիրառումը և այլն: Այս միության մի շարք անդամներ հետագայում դարձան տարբեր քաղաքական կուսակցությունների առաջնորդներ: 1988-1989 թթ. Վրաստանի քաղաքական դաշտում ի հայտ եկան այնպիսի քաղաքական կուսակցություններ, ինչպիսիք էին՝ «Ազգային իրավահավասարությունը», «Վրաստանի ազգային անկախությունը», «Վրաստանի ազգային ճակատը», «Շոթա Ռուսթավելու միությունը», «Վրաստանի կանանչների միությունը» և այլն: Լեգալ գործելու իրավունք ստացան նախկինում ձևավորված մի շարք այլ քաղաքական կուսակցություններ, որոնց թվին էին պատկանում Հանրապետական և Ազգային-դեմոկրատական կուսակցությունները[2]:

Դեռևս 1980-ական թթ. երկրորդ կեսերից խորհրդային ժառանգության հաղթահարման և Վրաստանի անկախության հարցը դարձել էր երկրի քաղաքական և մտավորական վերնախավի բուռն քննարկման թեման: Այդ առումով, երկրի ապագայով մտահոգ քաղաքական ու մտավորական վերնախավը բաժանված էր երկու հատվածների, որոնց սովորաբար անվանում են փիլիսոփաների խումբ (Մ. Մամարդաշվիլու գլխավորությամբ) և բանաստեղծների խումբ (Զ. Գամսախուրդիայի գլխավորությամբ): Դեպքերի և իրադարձությունների հետագա զարգացումը ցույց տվեց, որ առավել կենսունակ գտնվեց Զ. Գամսախուրդիայի ղեկավարած բանաստեղծների խումբը: Սակայն, նրանք լիովին պատրաստ չէին՝ հասկանալու համար բոլոր այն խնդիրներն ու դժվարությունները, որոնց Վրաստանը բախվելու էր պետական անկախության վերականգնումից հետո[3]:

Սկսած 20-րդ դարի սկզբներից, բայց հատկապես խորհրդային ժամանակաշրջանում, վրացական իրականության մեջ սկսեցին հաճախակի խոսել սեփական ազգի և մշակույթի բացառիկության մասին: Այս գործընթացին հատկապես նպաստեցին արվեստի ու մշակույթի մի շարք գործիչներ: Դրանց թվին առաջին հերթին պետք է դասել Թիֆլիսի արվեստաբանության դպրոցի հիմնադիր, ակադեմիկոս Գեորգի Չուբինաշվիլուն: Վերջինս փորձում էր ապացուցել, որ վրացական քրիստոնեական մշակույթը զարգացել է որպես ինքնուրույն և ինքնատիպ մշակույթ՝ իր վրա չկրելով ո՛չ բյուզանդական և ո՛չ էլ ռուսական ազդեցությունները: Այս գործընթացի մեջ իր

կարևոր ներդրումը կատարեց նաև փիլիսոփա Շալվա Նուցուբիձեն: Վերջինս իր հերթին առաջ էր քաշում այն տեսակետը, որ վրացական Վերածնունդը նախորդել է եվրոպականին և իր անմիջական ազդեցությունն է ունեցել վերջինիս առաջացման ու զարգացման վրա: Դրանից հետո փորձեր արվեցին ապացուցելու, որ Վրաստանը եղել է տարածաշրջանում նախամարդու բնակեցման միակ վայրը, վրաց ժողովուրդը անմիջական կապ ու բարեկամություն է ունեցել Եվրոպայի և Առաջավոր Ասիայի նախահնդեվրոպական մշակույթների և ցեղային միությունների հետ (այս տեսակետը առաջին անգամ 1930-ական թթ. իրենց աշխատություններում արծարծեցին Իվան Ջավախաշվիլին և Սիմոն Ջանաշիան): Սրանով Վրաստանը փորձում էր լեգալ տեսք տալ իր տարածքային և ժառանգական իրավունքներին: Ըստ էության, այս շղթայի հետ է կապված նաև Վրաստանի պատմության միջնադարի իդեալականացումը: Որպես վրացական պետականության նախատիպ քննարկվում էին Դավիթ Շինարար թագավորի և Թամար թագուհու շրջանի վրացական թագավորությունները: Բացի այդ, 1960-ական թթ. Վրաստանում մեծ թափ հավաքեց պատմական հուշարձանների շինարարությունը, մի հանգամանք, որը նույնպես կոչված էր հիմնավորելու վրաց ազգի պատմության և մշակույթի բացառիկությունն ու ինքնատիպությունը[4]:

Վերակառուցման արդյունքում ի հայտ եկած գործընթացները պահանջում էին վրացական հասարակության մեջ կատարել մի շարք էական փոփոխություններ ու տեղաշարժեր: Վրաստանի խորհրդային մտավորականությունը այս ալիքի տակ փորձում էր իր ձեռքը վերցնել ու առաջնորդել երկրում վերելք ապրող ազգային-հայրենասիրական շարժումը: Միևնույն ժամանակ, երկրում վերելք ապրող այդ ազգային շարժումը, որի մեջ ընդգրկված էին հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ, միշտ չէ, որ ենթարկվում կամ ուղղորդվում էր մտավորականության կողմից: Ավելին, այն դրսևորում էր ինքնուրույնություն և անվստահություն Վրաստանի «կաբինետային մտավորականության» հանդեպ: Այս երևույթը լուրջ վտանգ էր պարունակում վրաց մտավորականության համար, որոնք իրենց համարում էին այդ շարժման առաջնորդ: Կասկածի տակ էր դրված մտավորականության հիմնական և սկզբունքային, այն է՝ ազգի հոգևոր առաջնորդի դերը: Այդ պատճառով էր, որ մտավորականությունը սկսեց հանդես գալ ծայրահեղ ազգայնամոլական ելույթներով ու կոչերով, մի բան, որ համահունչ էր վրացական հասարակության օրվա տրամադրություններին: Որպես քաղաքական պայքարի միջոց ընտրվեց ժողովրդական զանգվածների ազգային ոգու բարձրացումը: Դա դիտարկվում էր որպես միակ միջոց՝ ժողովրդական զանգվածներին հրապարակային պայքարի հանելու համար: Սակայն գտնվեցին նաև այնպիսի հազվագյուտ մտավորականներ, ովքեր քննադատում էին մտավորականության այդ քաղաքականությունը: Դրանց թվին էր պատկանում Ռևազ Կարալաշվիլին: Նա բացահայտ կերպով քննադատում էր վրացական մամուլում լույս տեսնող ազգայնամոլությամբ և այլատյացությամբ լեցուն հոդվածները: Նա համոզ-

Զվիադ Գամսախուրդիա և Մերաբ Կոստավա

Սիմոն Զանաշիա

ված էր, որ իսկական մտավորականը երբեք չպետք է ժողովրդական զանգվածների մեջ սերմանի ազգայնամոլություն, այլատյացություն՝ քաղաքական դիվիդենդներ շահելու համար: Վերջինս արժանացավ շարժման առաջնորդների խիստ քննադատությանը[5]:

Վրաստանում հասարակական կարծիքի ձևավորման մեջ բավական մեծ դերակատարություն ունեցավ հայտնի հասարակական գործիչ Ակակի Բակրաձեն: 1988 թ. նոյեմբերին Թիֆլիսում, Ազգային-դեմոկրատական կուսակցության նախաձեռնությամբ, կառավարության շենքի դիմաց մի խումբ ուսանողներ հացադուլ հայտարարեցին: Ստեղծված իրադրության ճնշման ներքո՝ երկրի իշխանավորները ստիպված էին գնալ զիջումների: Վրաստանի Գերագույն խորհրդի նախագահությունը Մոսկվայից պահանջեց Սահմանադրությունից հանել այն դրույթը, որը սահմանափակում էր պետությունների՝ ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու իրավունքը: Իրավիճակը մեղմելու նպատակով Մոսկվայում տեղի տվեցին: Կառավարության շենքի դիմաց հացադուլը դադարեց: Նոյեմբերյան ցույցերին հաջորդած մի քանի հանդարտ ամիսները փոթորիկից առաջ հանգստություն էին հիշեցնում:

1989 թ. գարնանը Վրաստանում ներքաղաքական իրավիճակը, կապված Աբխազիայի անջատողական տրամադրությունների հետ, կրկին լարվեց: Լիխնի գյուղում հավաքված բազմահազար աբխազներ ընդունեցին հայտարարություն՝ Վրաստանի կազմից դուրս գալու և Ռուսաստանին միանալու վերաբերյալ[6]: Աբխազների այս քայլը վրաց ժողովրդի մեջ առաջ բերեց թշնամանք: 1989 թ. ապրիլի 4-ից կառավարության շենքի դիմաց կազմակերպվող ցույցերը մշտական բնույթ ստացան: Ցուցարարները պահանջում էին չեղյալ հայտարարել Աբխազիային տրված ինքնավարությունը: Հակաաբխազական ելույթների մեջ ընդգրկվեցին նաև տարբեր քաղաքական կուսակցություններ և կազմակերպություններ: Սակայն Աբխազիային ինքնորոշման իրավունքից զրկելու պահանջները մղվեցին երկրորդ պլան, քանի որ ցուցարարները ներկայացրին նոր, ավելի կարևոր պահանջ՝ Վրաստանի անկախության վերականգնումը: Այս պահանջին կրկին հաջորդեց մի խումբ երիտասարդների հացադուլը կառավարության շենքի դիմաց: Նման պահանջի ի հայտ գալը, բնականաբար, հանգեցրեց լարվածության մեծացման և հակամարտության խորացման՝ իշխանության ու ազգային շարժման ներկայացուցիչների միջև: Փաստորեն, Վրաստանի ազգային շարժման ներկայացուցիչները հարվածի տակ էին դրել Խորհրդային Միության ամենամեծ նվաճումը՝ նրա տարածքային ամբողջականությունը: Ուստի Խորհրդային Միության քաղաքական վերնախավը որոշում կայացրեց ձեռնարկել վճռական միջոցներ՝ Վրաստանում օրեցօր թափ առնող ազգային շարժումը կանխելու համար[7]:

1989 թ. ապրիլի 8-ին տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ Վրաստանի խորհրդային իշխանությունները որոշում ընդունեցին պաշտպանել Կրեմլի որոշումը՝ ցուցարարների դեմ զենքի կիրառման կապակցությամբ: Ապրիլի 9-ին՝ վաղ առավոտյան, Թիֆլիսի կառավարության շենքի դիմաց մարտա-

կան վիճակի բերվեցին Անդրկովկասյան ռազմական շրջանի զորքերը, ինչպես նաև Մոսկվայից ժամանած ԽՍՀՄ ներքին զորքերի հատուկ նշանակության դեսանտային ստորաբաժանումը: Ցուցարարներին ցրելու գործողությունը անմիջականորեն ղեկավարում էր Անդրկովկասյան ռազմական շրջանի հրամանատար գեներալ Իգոր Ռոդիոնովը: Ապրիլի 9-ին՝ վաղ առավոտյան, խորհրդային հատուկ նշանակության զինված ուժերը ցուցարարներին վերցրին օղակի մեջ: Մահակներով ու սակրավորական բահերով զինված՝ նրանք սկսեցին դաժան ծեծի ենթարկել ցուցարարներին: Մի քանի րոպեում զինվորները քշեցին կառավարության շենքի դիմաց հավաքված ցուցարարներին, այնտեղ մնացին միայն 19 սպանվածներ, որոնցից 16-ը կանայք էին: Ավելի քան 2000 մարդ թունավորվեց հեղձուցիչ գազի կիրառման պատճառով: Այս արյունոտ դեպքերից հետո քաղաքում սահմանվեց պարետային ժամ[8]:

Ապրիլի 9-ի դեպքերը բավական ծանր ազդեցություն թողեցին ժողովրդի վրա: Թիֆլիսի փողոցներում քայլող ռուս զինվորները ավելի էին սրում ստեղծված արտակարգ դրությունը և ուժեղացնում հակախորհրդային տրամադրությունները: Ապրիլի 10-ին զորքը շրջապատեց Թիֆլիսի պետական համալսարանի շենքը, որտեղ ապաստան էին գտել ազգային-ազատագրական ուժերի մեծամասնությունը: Շնորհիվ համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և մի խումբ ուսանողների ջանքերի, հնարավոր եղավ խուսափել բախումներից ու արյունահեղությունից:

Գեորգի Չուբինաշվիլի

1989 թ. արյունոտ դեպքերը շրջադարձային նշանակություն ունեցան Վրաստանի քաղաքական կյանքում: Նրանք պատճառ հանդիսացան հասարակության քաղաքական ակտիվության բարձրացման համար և վերջնականապես հեղինակազրկեցին կոմունիստական իշխանությունը երկրում: Վրաստանի ընդդիմադիր կուսակցությունները ստեղծեցին «Ազգային փրկության կոմիտե», որի մեջ մտան Վրաստանի Հելսինկյան միությունը (Զվիադ Գամսախուրդիա), Ազգային-դեմոկրատական կուսակցությունը (Գեորգի Չանտուրիա), Ազգային իրավահավասարության միությունը (Իրակլի Ծերեթելի): Ազգային փրկության կոմիտեի գլխավոր նպատակն էր Վրաստանը դուրս բերել Խորհրդային Միության կազմից և վերականգնել երկրի անկախությունը: Այս ամենը պետք է իրականացվեր փուլային տարբերակով և նախատեսում էր խաղաղ հանրահավաքների ու ցույցերի միջոցով հասնել կառավարող համակարգի աստիճանական լուծարմանը: 1990 թ. մար-

Իգոր Ռոդիոնով

տին Թիֆլիսում տեղի ունեցավ Վրաստանում գործող քաղաքական տարբեր կուսակցությունների և կազմակերպությունների արտակարգ համագումարը, որի ընթացքում կյանքի կոչվեց «Ազգային ֆորումը»: Այն պետք է դառնար ազգային շարժման ղեկավար մարմինը: Մի շարք հանգամանքների պատճառով, սակայն, «Ազգային ֆորումը» կարճ ժամանակ անց լուծարվեց:

1990 թ. ապրիլին Զվիադ Գամսախուրդիայի կողմնակիցները ստեղծեցին նոր քաղաքական միավորում, որը հետագայում կոչվեց «Կլոր սեղան-Ազատ Վրաստան» բլոկ: Բլոկի մեջ մտան Վրաստանի Հելսինկյան միությունը, «Իլյա Բարեպաշտ» ընկերությունը, Մերաբ Կոստավայի «Համավրաստանյան միությունը», «Վրաստանի ավանդապաշտների միությունը», «Ազգային ճակատ» արմատական կազմակերպությունը, Ազգային-քրիստոնեական կուսակցությունը[9]: Այս բլոկի նպատակն էր քաղաքական խաղաղ պայքարի ճանապարհով ազդարարել Վրաստանի վերականգնված անկախության մասին, դուրս գալ ԽՍՀՄ կազմից, հանրապետության տարածքից դուրս բերել խորհրդային բանակի զորամասերը, Վրաստանն անդամագրել ՆԱՏՕ-ին և այլն: «Կլոր սեղան-Ազատ Վրաստան» բլոկի հիմնական նպատակներից էր նաեւ 1921 թ. Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության սահմանադրության վերականգնումը:

1989 թ. ապրիլի 9-ի դեպքերից հետո ազգային-ազատագրական պայքարը Վրաստանում թևակոխեց որակապես նոր փուլ և ստացավ նոր բնույթ: 1990 թ. մարտի 9-ին, հետզհետե աճող քաոսի պայմաններում, ազգային-ազատագրական շարժման առաջնորդների ճնշման ներքո, ՎԽՍՀ Գերագույն խորհուրդը «Պետական սուվերենության պաշտպանության երաշխիքների մասին» ընդունեց որոշում, որի մեջ ասվում էր. «Վրաստանի Խորհրդային Հանրապետության Գերագույն խորհուրդը հաստատում է, որ 1921 թ. փետրվարին խորհրդային զորքերի մուտքը Վրաստանի տարածք իրավական տեսանկյունից հանդիսանում է ռազմական միջամտություն և Վրաստանի տարածքի բռնագրավում՝ գործող իշխանությունը տապալելու և խորհրդային կարգեր հաստատելու համար: Խորհրդային Ռուսաստանի կողմից այս քայլը հանդիսանում է միջազգային հանցագործություն»[10]:

Այսպիսով, օրենքից դուրս էր հայտարարվում Վրաստանի՝ գրեթե 70 տարի իշխանության ղեկի մոտ գտնվող Կոմունիստական կուսակցությունը: Ավելին, 1990 թ. հունիսի 20-ին Վրաստանի Գերագույն խորհուրդը, Թիֆլիսի համալսարանի ուսանողների կոչով անօրինական ճանաչեց պետական բոլոր այն պայմանագրերը, որոնք կնքվել էին «Վրաստանի օկուպացիայից» հետո և դրանից հետո ստեղծված կառույցները[11]: Դրանով ուժը կորցրած հայտարարվեց 1922 թ.-ի՝ ԽՍՀՄ կազմավորման մասին պայմանագիրը[12]:

Այսպիսով, մարտի 9-ին ընդունված որոշումը իրավական հիմք հանդիսացավ Վրաստա-

Իվան Զավախաշվիլի

նում բազմակուսակցական ընտրություններ անցկացնելու համար: 1990 թ. հոկտեմբերի 28-ին կայացան Վրաստանի Գերագույն խորհրդի ընտրություններ, որին իրենց մասնակցությունը բերեցին 14 կուսակցություններ և կուսակցական բլոկներ: Նոյեմբերի 11-ին կայացավ ընտրությունների 2-րդ փուլը, որի արդյունքում Վրաստանում ձևավորվեց բազմակուսակցական օրենսդիր մարմին՝ 246 պատգամավորներով, որոնցից 125-ը ընտրվել էին համամասնական, 121-ը՝ մեծամասնական կարգով: Խորհրդարանի 81 մանդատները իրենց ձեռքը վերցրին «Կլոր սեղան-Ազատ Վրաստան» բլոկի ներկայացուցիչները: 1990 թ. նոյեմբերի 14-ին ՎԽՍՀ Գերագույն խորհրդի շենքում իր աշխատանքները սկսեց բազմակուսակցական սկզբունքով ընտրված նորընտիր Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը: Փակ քվեարկության արդյունքում 232 կողմ, 5 դեմ և 1 ձեռնպահ հարաբերակցությամբ Վրաստանի Գերագույն խորհրդի նախագահ ընտրվեց Զվիադ Գամսախուրդիան[13]:

Այս ընտրություններով, փաստորեն, պետական անկախության վերականգնման համար երկրում սկսված ազգային-ազատագրական պայքարը ավարտվեց, կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ թևակոխեց որակապես նոր փուլ: Զ. Գամսախուրդիան կոմունիստական գաղափարախոսությունը փոխարինեց ազգայինով: Ազգային գաղափարախոսությունը հանդիսանում էր միակ հնարավոր տարբերակը, որով հնարավոր էր ազդել հասարակական գիտակցության վրա և ամրապնդել սեփական իշխանությունը: Բոլոր նրանք, ովքեր համաձայն չէին այս տեսակետի հետ, Գամսախուրդիայի կողմից հայտարարվում էին ազգի թշնամի:

1. Kotkin S., Armageddon averted. The soviet collapse, 1970-2000. Oxford University Press, 2001. էջ 245:
2. Вачнадзе М., Гурули В., Бахмадзе М., История Грузии, часть вторая, Москва, 2002 г., էջ 58.
3. Андроникашвили З., Майсурадзе Г., Грузия-1990: филологема независимости или неизвлеченный опыт. http://magazines.russ.ru/nlo/2007/83/an10.html)
4. ანდრონიკაშვილი ზაალ , კავკასიური სოფელში. წერილი მეგობარს, საქართველოს მხრივ საქართველოს ათასწლეულში, თბილისი, 2000, էջ 243-249:
5. პრობლემები, პრობლემები, ლიტერატურული საქართველო, 23 დეკემბერი, 1988.
6. Bruno Coppieters, The Georgian-Abkhaz Conflict. Europeanization and Conflict Resolution: Case Studies from the European Periphery, Journal on Ethnopolitics and Minority issues in Europe, issue 1, 2004.
7. Скаков А. Ю., Внутриполитическая ситуация в Грузии (Грузия: проблемы и перспективы развития, РИСИ, под редакцией Кожокина Е. М.), т. 2, М., 2002, էջ 148:
8. Kotkin S., Armageddon averted. The soviet collapse. էջ 273:
9. Վահե Սարգսյան, Սամցխե-Զավախք-Թռեղքը հայ-վրացական հարաբերությունների հոլովույթում, Երևան, 2006 թ., էջ 72:
10. Վահե Սարգսյան, էջ 82:
11. Скаков А. Ю., էջ 261:
12. Мяло К. Г., Россия и последние воины xx века (1989-2000), К истории падения сверхдержажы, Москва, 2002, էջ 89:
13. «Հայաստանի Հանրապետություն», 15.11.1990:

ՍՈՒՄԿԱՅԻԹԻ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

ԱՒՕ ԳԱԹՐՃԵԱՆ

Պատմութիւնը ժողովուրդի յիշողութիւնն է, պատմութիւնը կը սորվեցնէ, թէ ինչպէս պէտք է հասկնալ եւ դիմաւորել ապագան:

Հետեւաբար, մեկնելով այս իրողութենէն, կը վերանայինք նորագոյն պատմութեան մէջ, 23 տարի առաջ, Ատրպէյճանի Սումկայիթ քաղաքի մէջ տեղի ունեցած հակահայ ջարդերը, որոնց յաջորդեցին Ատրպէյճանի տարածքին գտնուող այլ շրջաններու ջարդերը:

Սումկայիթեան ողբերգութիւնը առաջ բերաւ նոր մարտահրաւէրներ, եւ համայն հայութեան առջեւ, թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Սփիւռքի մէջ, ծառացան պայքարի նոր եղանակներ, ընդվզումի եւ պոռթկումի կեցուածքներ:

Այսպէս, ուրեմն, Հայոց պատմութեան մէջ նոր դէպք մը եւս արձանագրուեցաւ՝ «Սումկայիթ»:

Ի՞նչ էր տեղի ունեցածը, այդ ալիքը ուրկէ՞ կու գար, ի՞նչ դրդապատճառներով եւ ի՞նչ նպատակ կը հետապնդէր:

Այս նիւթը վստահաբար համապարփակ ներկայացնելու համար անհրաժեշտ է անոր խորքը թափանցել, անոր մութ ծալքերը պրպտել, առանց թշնամական ոխակալութեան, այլ գիտական եւ մարդկային զգացումներէ մեկնած:

Խորքին մէջ Ատրպէյճանի կառավարութեան եւ ընդհանրապէս թաթար ժողովուրդի բարբարոսութիւնը նորութիւն չէր հայ ժողովուրդին համար: 1905-ին հայ-թաթարական ընդհարումներու օրերուն եւս հայը ճաշակած էր նոյնը, սակայն հոն յաղթական դուրս եկած:

Հետեւաբար՝ արեւելահայ ժողովուրդը փորձառութիւնը ունէր, թէեւ 70 տարի շարունակ մեծ պատրանքի մը մէջ ապրած էր՝ հաւատալով խորհրդային «եղբայրութեան» կեղծ սկզբունքներուն, բայց եւ այնպէս բոլոր հայերը չէ, որ կը հաւատային անոր, որովհետեւ ակնյայտ էր, թէ Ատրպէյճանի կառավարութիւնը կը շարունակէ շրջանը իր հայ

բնակչութենէն պարպելու ուղղակի եւ անուղղակի ջանքերը ի գործ դնել վնասակար գործերով: Այս բոլորը կու գային հաստատելու, որ անուղղակի կը վարուէր ազգային ցեղասպանական, պանթուրքական քաղաքականութիւն:

Թաթարները սնանելով համաթրքական գաղափարախօսութեամբ, Անդրկովկասի մէջ կազմակերպեցին հայկական կոտորածներ, ինչպէս 1905-ին, այնպէս ալ՝

Ում Էլ Պանին

1988-ին: Ուստի, ատրպէյճանական ատելութիւնը ամէն առիթի վերստին բորբոքելու նշաններ ցոյց կու տայ:

Հայ-թաթարական կոտորածներու տպաւորութեան տակ, ատրպէյճանցի յայտնի կին գրող Ում-Էլ-Պանինը, որու մանկութիւնը անցած է Պաքուի մէջ, իր «Կովկասեան օրեր» գիրքին մէջ կը գրէ. «Տօնական օրերուն մենք կը խաղայինք «հայերու սպանդ» խաղը, զոր կը գերադասէինք բոլոր միւս խաղերէն: Մեր մոլեռանդ կիրքերով արբեցած՝ մենք կը զոհաբերէինք Թամարը (մօր կողմէ հայուհի) մեր խռովարար ատելութեան զոհասեղանին վրայ: Սկիզբը մենք քմահաճօրէն զայն կը մեղադրէինք՝ իբրեւ մեղսակից մուսուլմանի սպանութեան եւ անմիջապէս կը գնդակահարէինք, քանի մը անգամ իրարու ետեւէ, որպէսզի վերաթարմացնէինք հաճոյքը: Յետոյ կը պոկէինք անոր անդամները՝ լեզուն, գլուխը, ներքին օրկանները, զոր կը շպրտէինք շուներուն, իբրեւ արհամարհանք հայկական մարմնին»:

Այսպիսի խաղերով դաստիարակուած՝ պաքուեցի երեխաները հետագային դարձան անկախ Ատրպէյճանի ղեկավարներն ու զինուորները, որոնք տեւաբար իրագործեցին պատմութեան մէջ ամէնէն հրէշային բարբարոսութիւնները՝ սկսելով այս անգամ Սումկայիթէն:

Արդարեւ, համաթուրանականութեան քաղաքականութիւնը միշտ կենդանի է թուրք-թաթար քաղաքական ղեկավարութեան թէ մտաւորականութեան միտքին եւ յիշողութեան մէջ:

Սումկայիթի եւ այլ շրջաններու կոտորածներու նախօրէին,

ողջ Ատրպէյճանի տարածքին տեղի ունեցան նախ կազմակերպուած բազմահազարանոց «հանրահաւաքները», որոնց ընթացքին լսուեցան հայերու սպանութիւններու ու ջարդերու կոչեր:

Անոնց յաջորդեց 1988 փետրուար 26-29-ը, Ատրպէյճանի իշխանութիւններու փաստացի աջակցութեամբ եւ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւններու Միութեան ղեկավարութեան լռակեաց թոյլտուութեամբ, Սումկայիթ քաղաքի հայաբնակ վայրերու հայերու զանգուածային կոտորածը:

Սումկայիթի հայերու ջարդերը, բացառիկ դաժանութեամբ կատարուած գազանութիւններն ու սպանութիւնները, մարմիններու անդամահատումն ու ծեծը, հղի կիներու որովայնի դաշունահարումն ու ողջակիզման դէպքերը տեղի ունեցան օր ցերեկով, բազմաթիւ անցորդներու աչքին առջեւ:

Ջարդարարները կանխամտածուած եւ ծրագրուած ձեւով գործեցին իրենց որդեգրած Սումկայիթի ցեղասպանութիւնը: Այսպէս, նախօրօք, քարերու կուտակումը ջարդերու համար նախատեսուած վայրերը, քաղաքէն դուրս տանող ճանապարհներուն արգելափակոցներու կառուցումը, հայերու ցուցակներու առկայութիւնը, հեռախօսային հաղորդակցութեան կապի հանգոյցի քաղաքային աշխատողներու կողմէ հեռախօսներու անջատումը, բոլոր թաղամասերու մէջ լրիւ եւ այլ շրջաններու մէջ ջարդերու օրերուն ելեկտրականութեան անջատումը, աւազակախումբերու յստակ կարգապահութիւնը եւ ստորակարգութիւնը, որոնք ցոյց կու տան ցեղասպանի կատարելիք աշխատանքի ցուցակի առկայութիւնը ամէն ատեն ու ամէն տեղ:

Սումկայիթի ատրպէյճանցի թուրք-թաթարներու ջարդի

եւ կոտորածի թրքաբարոյ անմիջական պատասխանը վերստին յայտնաբերեցին համաթուրանականութեան քաղաքականութեան առկայութիւնը, թէեւ քողարկուած ձեւով:

Գազազած հրոսակախումբերը պատշգամներէն կը շպրտէին կահոյք, սառնարաններ, հեռատեսիլներ, կահ-կարասիներ եւ կը հրդեհէին զանոնք: Բնակարաններէ կը քաշէին եւ կը հանէին բնակիչները, իսկ անոնք, որոնք կը փորձէին փախչիլ, ամբոխը վրայ կը հասնէր եւ կը յարձակէր զոհին վրայ: Խուժանը կը գործէր երկաթեայ ձողերով, դանակներով, կացիններով, ապա սպանուածը կը շպրտէին խարոյկի վրայ:

250 հազարանոց քաղաքի գրեթէ ողջ տարածքը դարձած էր հայ բնակչութեան զանգուածային անարգել ջարդերու վայրը: Ջարդարարները բնակարանները կը ներխուժէին՝ իրենց ձեռքը ունենալով այնտեղ ապրող հայերու նախօրօք կազմուած անուններու ցուցակները: Ջարդարարները առանձին բնակարաններու վրայ կը յարձակէին միաժամանակ 50-80 հոգինոց խումբերով:

Եղան տասնեակ սպանուածներ, որոնց զգալի մասը ողջակիզուեցաւ ծեծերէ եւ խոշտանգումներէ յետոյ: Եղան բռնաբարուածներ, որոնց մէջ կային անչափահաս աղջիկներ: Աւերուեցան աւելի քան երկու հարիւր բնակարաններ, հրկիզուեցան կամ ջարդուեցան տասնեակ ինքնաշարժներ, քանդուեցան տասնեակ արհեստանոցներ, խանութներ, կրպակներ: Եղան հազարաւոր փախստականներ: Լաւագոյն պարագան մեռելային լռութիւնն էր, իսկ վատագոյնը՝ այդ մարդոց ըրածները արդարացնելու փորձերը: Անոնք իրենք զիրենք կ՚անուանէին մտաւորական եւ ատրպէյճանական ազգի «աղը»: Այսպիսին էր Սումկայիթի դիմագիծը, որ առաջին հետքը թողուց Ատրպէյճանի ղեկավարներու կողմէ, մարդկութեան դէմ կատարուած յանցագործութիւններու ցուցակի մէջ:

Փետրուար 28-ին պետական մակարդակով կազմակերպուած սումկայիթեան ոճրագործու-թեան նպատակն էր Մոսկուան վախցնել, միւս կողմէ ան պատասխան էր Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի 1988 փետրուար 20-ի որոշումին, ըսելով, որ Ղարաբաղեան հարցի լուծումը շատ բարդ է ու մեծ արիւնահեղութեան պատճառ կ՚ըլլայ, իսկ հայերը միշտ սարսափեցնել, թէ՝ «մի մոռնաք, որ Ատրպէյճանի մէջ ունիք 500 հազար հայեր եւ անոնց անվտանգութեան մասին պէտք է մտածէք»:

Հազարանոց ամբոխը, որ դուրս եկած էր, խումբերու բաժնուելով, կրցաւ խիստ հեռեւողականօրէն տուն առ տուն քաղաքը «մաքրել» հայերէ:

Այնուհետեւ, քանի մը օրուան ընթացքին Սումկայիթի 14 հազար հայ բնակիչները ծանր պայմաններու տակ լքեցին արդէն քաղաքը:

Քաղաքը լրիւ «ազատուած» էր «հայկական տարրերէ», բացի թերեւս քանի մը տասնեակէ, խառն ամուսնութեամբ ընտանիքներու պատկանող հայերէ, որոնց յետագային, Լեռնային Ղարաբաղի ռազմական գործողութիւնները սկսելէն յետոյ, օգտագործած են ատրպէյճանցի ռազմագերիներու հետ փոխանակելու համար: Փախըստականներէ շատերը տեղահանումէ յետոյ շուտով մահացած են, ոչ միայն ծեծի հետեւանքով, այլեւ՝ ապրած ցնցումներէն:

Յատուկ ուշադրութեան արժանի է այն փաստը, որ ջարդերէն անմիջապէս յետոյ, վերի խաւը, մասնաւորապէս Ատրպէյճանի ԽՍՀ Նախարարներու խորհուրդի նախագահ Հ. Ն. Սէյիտով, որ կը գլխաւորէր մարտի 1-ին Սումկայիթ ժամանած կառավարական յանձնաժողովը, ինչպէս նաեւ Ատրպէյճանի Կոմկուսի Կեդրոնական կոմիտէի աշխատակից Կանիֆաեւի կարգադրութեամբ կազմակերպուած է հայկական բնակարաններէ դուրս թափուած իրերու հաւաքում, բակերու եւ մուտքերու լուացում, ինչպէս նաեւ աւերուած բնակարաններու, հասարա-

կական նշանակութեան առարկաներու տենդագին վերանորոգում: Այսինքն՝ ոչընչացուած են իրեղէն ապացոյցները, թաքցուած յանցագործութիւններու հետքերը, որոնց վրայ զգալիօրէն բարդացած են հետաքննութեան աշխատանքները: Այդ մասին կը վկայեն ականատեսներ. շատ զոհերու մարմինները դուրս հանուած են Սումկայիթէն եւ հետագային յայտնաբերուած Պաքուի եւ մերձակայ միւս բնակավայրերու դիարաններու մէջ:

Այսպիսով, ամէնէ սովորական անձն անգամ կը գիտակցի, որ Սումկայիթի մէջ ատրպէյճանական իշխանութիւններու կողմէ իրագործուած է ծրագրուած եւ կազմակերպուած ցեղասպանութիւն, որ ուղղուած է ոչ միայն Ատրպէյճանի ամբողջ հայկական համայնքի ահաբեկումին, այլեւ Սումկայիթի հայկական համայնքի ամբողջական վերացումին՝ քաղաքի էթնիք զտումին:

Սումկայիթի մէջ իրագործուած ցեղասպանութիւնը բացարձակապէս համարժէք քաղաքական եւ իրաւաբանական գնահատական չստացաւ, իսկ անոր կազմակերպիչները եւ գլխաւոր կատարողները ոչ միայն խուսափեցան պատիժէ, այլեւ անոնց անունները մինչեւ հիմա այդպէս ալ անյայտ մնացին համաշխարհային լայն հանրութեան շրջանակներուն: Չնայած ամէն ինչ եղած էր Սումկայիթի մէջ կատարուած յանցագործութեան հանգամանքները ծածկելու, անոր բնոյթը, առանձնայատկութիւնները եւ կազմակերպողները խեղաթիւրելու համար, հաւաքուած անհրաժեշտ քանակու-թեամբ փաստաթուղթերը, վկայութիւնները եւ այլ փաստեր թոյլ կուտային միանշանակ եզրակացութիւն կատարել: Ջարդը նախապատրաստուած եւ իրականացուած էր պետական բարձր մակարդակով, իսկ անոր գլխաւոր կազմակերպիչները եւ կատարողները դեռեւս խորհրդային Ատրպէյճանի այն ժամանակուայ ղեկավարութիւնն էին եւ անոր հետ բազում թելերով կապուած գաղտնի քրէական կազմակերպութիւններ եւ ազգայնական թրքամէտ շրջանակները:

Սումկայիթի նման բարբարոս յանցագործութիւնը 20-րդ դարու կիսուն համաշխարհային հանրութեան կողմէ որակուեցաւ որպէս մարդկութեան դէմ յանցագործութիւն՝ ցեղասպանութիւն: Որպէս վտանգաւոր արարք, այդ յանցագործութիւնը վաղեմութեան ժամկէտ չունի: Ցեղասպանութեան կազմակերպիչներու դատապարտումը եւ պատիժը իրականացուած են ՄԱԿ-ի ցեղասպանութիւն յանցագործութիւնը կանխելու եւ պատժելու ՄԱԿ-ի (9 դեկտեմբերի 1948 թուականի) պայմանագրի եւ ռազմական յանցագործութիւններու ու մարդկութեան դէմ յանցագործութիւններու նկատմամբ վաղեմութեան ժամկէտ չկիրառելու պայմանագրի (26 նոյեմբերի 1968 թուականի) հիման վրայ: «Ցեղասպանութիւն» եզրի սահմանման բացատրութեան մէջ մասնաւորապէս կ՚ըսուի. «քանակական բնութագիրը որոշիչ չէ ցեղասպանութեան յանցագործութեան դէպքին: Ցեղասպանութիւնը ազգային խումբի քանի մը ներկայացուցիչներու ըսպանութիւնն է, եթէ այդ սպա-

նութիւնը կատարուած է որպէս այդպիսին տուեալ ազգային խումբը ոչնչացնելու նպատակով»: Հետեւաբար, Սումկայիթի մէջ կատարուածը հայերու նկատմամբ ցեղասպանութիւն է եւ լիովին կը համապատասխանէ ցեղասպանութիւն յանցագործութիւնը կանխելու եւ պատժելու ՄԱԿ-ի պայմանագիրի 2-րդ յօդուածին:

1988 թուականի հոկտեմբերի 18-էն մինչեւ նոյեմբերի 18-ը ԽՍՀՄ գերագոյն դատարանի մէջ լսուեցան Սումկայիթի մէջ կատարուած յանցագործութիւններուն վերաբերող 19 քրէական գործեր: Դատական քննութեան ընթացքին հարցաքննուած են բազմաթիւ ականատեսներ, որոնց ցուցմունքները կը վկայեն յանցաւոր գործողութիւններու դաժանութեան յատուկ եւ անոնց կազմակերպուած բնոյթի մասին: Ինչպէս նշուած է մեղադրական եզրակացութեան մէջ, այդ յանցագործութիւններուն մասնակցած են «ատրպէյճանական ազգութեան հարիւրաւոր քաղաքացիներ»:

Ակնյայտ էր Սումկայիթի իրաւապահ մարմիններու աջակցութիւնը ջարդարարներուն եւ մարդասպաններուն, իսկ հետագային ալ՝ հանրապետական Ներքին գործոց նախարարութեան աշխատակիցներու նպատակաուղղուած գործողութիւնները քրէական գործերը տապալելու եւ յանցագործները թաքցնելու համար:

Դատական քննութեան ընթացքին պարզուած են, որ նախնական հետաքննութիւնը տարուած է միակողմանի եւ ոչ առարկայական:

Հայազգի քաղաքացիներու զանգուածային սպանութիւնները դատարանը որակեց որպէս խուլիկանական շարժառիթներով սպանութիւններ:

Միւս կողմէ՝ խորհրդային ղեկավարութիւնը անտեսելով բոլոր վկայութիւնները, կտրականապէս կը հրաժարէր որակել Սումկայիթի կատարուած զանգուածային սպանութիւնները որպէս ազգային ու կրօնական ատելութեան գետնի վրայ կատարուած յանցագործութիւն:

Համաշխարհային հանրութեան կողմէ Սումկայիթի մէջ կատարուած ցեղասպանութիւնը լռութեան մատնող քաղաքականութիւնը, թոյլտուութիւնը ցեղասպանութեան ատրպէյճանցի հեղինակներու նկատմամբ, որոնց հետեւանքով ջարդերու կազմակերպիչներն ու գործունեայ մասնակիցները խոյս տուին քրէական պատիժէ, հնարաւոր դարձուցին արիւնահեղ նախճիրը շարունակել Ատր.ԽՍՀ ողջ տարածքին վրայ:

Արդարեւ, սկսաւ փախստականներու ներհոսքը Հայաստան, եւ Հայաստան ընդունեց 360 հազար տեղահանուածներ:

Սումկայիթ, Պաքու, Գանձակ քաղաքներուն մէջ այլեւս հայ չէր մնացած: Ցեղասպանութեան իսկական մեղաւորները դարձեալ անպատիժ էին: Ահա այսպէս իր գոյութիւնը դադրեցուց հայկական համայնքը, որ իր իւրայատուկ երանգով անմոռանալի հետք թողած էր ընդհանրապէս Ատրպէյճանի տարածքին եւ յատկապէս Պաքուի մշակութային դէմքի ձեւաւորման գործին մէջ:

Ատրպէյճանական իշխանութիւնները ամենայն վայրագութեամբ սպաննեցին իրենց իսկ քաղաքացիները միայն այն բանի համար, որ անոնք ազգութեամբ հայ էին, եւ այսօր Ատրպէյճանի իշխանութիւնները ամէն կերպ կը խեղաթիւրեն պատմութիւնը, ապատեղեկատուութիւն կը տարածեն եւ կը փորձեն դատապարտել Խոջալուի մէջ իբր թէ տեղի ունեցած ատրպէյճանցիներու ցեղասպանութիւնը: Անոնք կ՚ուզեն կեղծել պատմութիւնը եւ աստիճանաբար դահիճի որակումէն իջնել «զոհի որակումի»:

Սումկայիթի հիմնախնդրին մէջ յստակ է, որ հայկական կողմի լռութիւնը կը ծառայէ ատրպէյճանական կողմին, անոնք շատ լաւ կազմակերպուած ձեւով, ինչպէս նաեւ ատրպէյճանական սփիւռքի ներդաշնակ համագործակցութեամբ, կը հակադրեն իրենց քարոզչամեքենայի աշխուժութեան եւ հայերը կը ներկայացնեն որպէս յարձակող ու կը փորձեն փաստարկել Խոջալուի մէջ տեղի ունեցածը, այսպէս կոչուած հայե-

րու կողմէ իրագործուած ցեղասպանութիւն:

Հետեւաբար, հակակշռող քայլ առնելու համար, Ատրպէյճանի քաղաքական շրջանակները կանխաւ Խոջալուի ոգեկոչական ձեռնարկներ կը կազմակերպեն եւ նման փաստաթուղթ քաղաքական շրջանառութեան մէջ կը դնեն, ամէն փետրուար 26-ը կը տօնեն այսպէս կոչուած «Խոջալուի ցեղասպանութեան օր»:

Այլ օրինակ մը եւս տանք. ատրպէյճանական հեռատեսիլի կայան մը, իր ամէնօրեայ լուրերու նախօրէին կը ցուցադրէ ծանուցման եղանակով այսպէս կոչուած «Խոջալուի ցեղասպանութիւն» եզրը եւ նիւթական ֆոնտի դրամահաւաքի կոչը, անշուշտ անգլերէն եւ ատրպէյճաներէն լեզուներով:

Սումկայիթի ցեղասպանութիւնը իր ազդեցութիւնը ունեցաւ բնականաբար արուեստի բնագաւառէն ներս նաեւ, մեր տեսանկիւնէն, սակայն, ոչ հակառակորդներու քանակին ու ազդեցութեան չափ:

Անոր ամէնէն լաւ օրինակներէն այստեղ կու տանք քանի մը հատ միայն:

Ռուս բանաստեղծ Միխայիլ Տուտինը, որ երկար տարիներ բարեկամական մեծ կապ ունէր Հայաստանի ու հայ ժողովուրդին հետ, եւ խորապէս զգալով մարդկային ցաւը ու հայ ժողովուրդի տառապանքը, գերզգայուն բանաստեղծը անմիջապէս իր «Երեք նամակ Հայաստանին» շարքին մէջ պիտի արտայայտուէր իր տխուր խոհերու ողբերգական իրադարձութիւններու՝ Սումկայիթի հայերու ջարդի մասին, որ այստեղ կը մէջբերեմ.

«Ամէն ինչ դարձեալ հինի նման է.

Եւ այս գիշերը գալիքն է ողբի:

Եւ կը յառնի ինչպէս սարսուռը մարմնի մէջ

Արիւնէ խեղթացած Սումկայիթը»:

Ռուս բանաստեղծը, կարեկցանքի ու հաւատի վեհ զգացումներով համակուած՝ Սումկայիթը արեամբ ողողումը յիշատակելով կ՚աւելցնէ.

«Մերթ ցեղասպանութիւն, մերթ Սումկայիթ,

Մերթ որուրը երկրաշարժի.

Անվերջ արիւն եւ արիւն,

Եւ քո ճակատագրին

Կը ցաւի ամէն ոք, Հայաստան:

Բայց դուն կը գտնես քու մէջ միշտ

Ձգտում հացի ու երգի:

Եւ ես կը սիրեմ քեզ վաղուց

Կեանքի հանդէպ հաւատի համար, Հայաստան»:

Միւս կողմէ քանդակագործներ՝ Գարեգին Դաւիթեան, Միքայէլ Նազարեան, Գրիգոր Բաղումեան եւ քանի մը այլ արուեստագէտներ, իրենց ստեղծագործութիւններուն ընդմէջէն արտացոլած են Սումկայիթի եւ Ատրպէյճանի այլ վայրերու մէջ տեղի ունեցած հայկական ջարդերը:

Երգի բնագաւառին մէջ, երգիչ Գօգօ Հայիթեան «Նոր եղեռն» վերնագիրը տուած է Սումկայիթի ցեղասպանութեան մասին յօրինած իր երգին, որուն մէջ օգտագործած է «ազգասպանութիւն, ջարդ, կոտորել» եւ այլ բառեր:

Իսկ Վահագն Դաւթեան «Իմ հարեւաններին» ոտանաւորով պիտի ներկայացնէր թաթար ժողովուրդն ու անոնց իրագործած բարբարոսութիւնները:

Յաջորդաբար, 1894-1896-ին հայերու զանգուածային կոտորածները, 1909-ին Ատանայի, 1915 թուականին Արեւմտահայաստանի, 1918-20-ական թուականներուն՝ Լեռնային Ղարաբաղ, մասնաւորապէս՝ Շուշի, 1988-ին՝ Սումկայիթ, շղթայ մը, որուն օղակները կապակցուած են. իւրաքանչիւրը չդատապարտուած ոճրագործութիւն՝ ցեղասպանութիւնը դարձնում է շարունակական:

Կատարուած իրերայաջորդ ցեղասպանութիւններու նկատմամբ համաշխարհային ընկերութեան վարած լռութեան մատնելու քաղաքականութիւնը յանգեցուած է այն բանին, որ ջարդերու կազմակերպիչներն ու աշխուժ մասնակիցները խուսափած են պատիժէ:

Ինչպէս թուրքերը իրենց կարգին, այնպէս ալ ատրպէյճանցիք կ՚անտեսեն բոլոր այն հաւաստի տեղեկութիւնները, որոնք կը փաստեն Սումկայիթի, Գանձակի, Պաքուի, Մարաղայի եւ ուրիշ շրջաններու մէջ ատրպէյճանցի-

МЕЛКУМЯН ЭДУАРД СОГОМОНОВИЧ, 1960 г. рождения, Родом из с. Джилаг Гадрутского р-на НКАО.

Проживал по адресу: Сумгаит, квартал 41а, д. 26, кв. 21.

Убит вместе с матерью, отцом, братом и сестрой. Срочную службу в рядах СА провел в Афганистане. «Кровоизлияние под оболочки в веществе и желудочки головного мозга, перелом костей черепа». (Был сожжен и изуродован так, что труп опознали по обуви).

СВИДЕТЕЛЬСТВО О СМЕРТИ
ՎԿԱ ՄԱՀՎԱՆ ՄԻՋՈՒՏՔԱՄԻ

ներուն գործած ջարդերը: Մասնաւորաբար Սումկայիթի ջարդը՝ փետրուար 1988-ին, որ վերակենդանացուց հայերուն դէմ Ատրպէյճանի ղեկավարութեան որդեգրած ցեղասպանութեան ռազմավարութիւնը, որ մինչեւ օրս կը շարունակուի:

Վերոնշեալ քաղաքականութիւնը հնարաւոր դարձուց արիւնալի խրախճանքի շարունակումը: Երկու ճակատներու վրայ թափ առնելով եւ գագաթնակէտին հասնելով՝ ազգայնամոլներու հիւանդագին ատելութեան զոհ դարձան հարիւրաւոր հայեր, Պուտափէշքի մէջ Գուրգէն Մարգարեան կացինով սպաննուեցաւ եւ Հրանդ Տինքը փամփուշտով ու տակաւին Նախիջեւանի, Ջուղայի դէպքերը... պատմամշակութային սրբացած կոթողները ոչնչացան:

Կեանքը ցոյց տուաւ մեզի, որ թուրք-թաթարները չեն փոխուիր, շեշտուեցաւ որ Սումկայիթի մէջ տեղի ունեցածը արիւնարբու համաթրքութեան դրսեւորում էր, որովհետեւ իւրաքանչիւր թուրք-թաթար համաթրքական քաղաքականութեան հետեւորդ է:

Այսօր, Ատրպէյճանի մէջ ազգային-հասարակական կեանքի բոլոր ոլորտներու մէջ կը տիրէ ծայրայեղ հայատեացութեան մթնոլորտ, որ դարձած է յատկապէս Ատրպէյճանի քաղաքական իշխանութեան քարոզչական զէնք, եւ ի դէմս հայերու՝ կը ձեւաւորուի թշնամական կերպար: Այս գործընթացի իրականացման մէջ ներգրաւուած են.-

ա. երկրի քաղաքական իշխանութիւնները,

բ. հասարակական- քաղաքական կազմակերպութիւնները,

գ. զանգուածային լրատուութեան բոլոր միջոցները,

դ. գիտական-ակադեմական շրջանակները,

ե. կրթական հաստատութիւնները՝ ծրագիրներով եւ դասագիրքերով,

զ. ատրպէյճանական սփիւռքը:

Յատկապէս քաղաքական ճակատի վրայ, ազատագրական մեր պայքարը ձախողութեան մատնելու յարմարագոյն եւ ամէնէն յուսալի ռազմավարութիւնը հայութեան պառակտումն է մեր հակառակորդներուն կողմէ՝ մեր շարքերը տկարացնելու եւ Հայ դատը մեր իսկ ձեռքերով սնանկութեան դատապարտելու յըստակ դիտաւորութեամբ:

Այս առընչութեամբ նորանոր փորձեր կը կատարուին մանաւանդ մեր օրերուն: Հակառակորդը միջոցներուն մէջ խտրութիւն չի դներ եւ այլազան դաւալից եղանակներով կը ջանայ փորձութեան ենթարկել հայ ժողովուրդի եւ հայ քաղաքական կազմակերպութեանց քաղաքական եւ գաղափարական ողջմտութիւնն ու պայծառատեսութիւնը, ինչպէս նաեւ կազմակերպական հզօրանքի եւ պայքարի ներքին ամուր ճակատի կերտման մեր կամքը:

Այսօր օրն է Ատրպէյճանի հակահայ քաղաքականու-թեան դէմ պայքարելու:

Առ այդ, անհրաժեշտ կը նկատենք կատարել քանի մը առաջարկներ:

1.- ՀՀ Ազգային ժողովը պէտք է նախ պաշտօնապէս ճանչնայ եւ ապա դիմէ միջազգային դատարան՝ պահանջելով պատժել եւ պատասխանատուութեան ենթարկել հայերու նկատմամբ կազմակերպուած Սումկայիթի ցեղասպանութիւն իրականացուցած Ատրպէյճանը:

2.- Հայաստանի Հանրապետութիւնը միջոցներ պէտք է տրամադրէ Ցեղասպանութեան թանգարանին, եւ վերջինս, ներգրաւելով սումկայիթեան դէպքերուն քաջատեղեակ մարդոց, կարողանայ Ատրպէյճանի մէջ կատարուած դէպքերու վերաբերեալ նախկին Խորհրդային Միութեան տարածքէն փաստեր հաւաքել, վերլուծել եւ

կազմել ամբողջական թղթածրար:

3.- Համապատասխան ճիգով իրազեկ պահել միջազգային հանրային կարծիքն ու բոլոր պետությունները, մատնանշելով Ատրպէյճանի բոլոր տեսակի՝ անցեալ եւ ներկայ իշխանություններուն հայութեան հանդէպ վարած ոճրային քաղաքականությունը:

4.- Սումկայիթի ոճրագործությունը արժանի պատիժ ստանալու համար հարկ է փաստաթուղթեր եւ հոչակագիրներ մշակել ու ներկայացնել ՄԱԿ-ին, ԵԱՀԿ-ին, Եւրոխորհուրդին, Եւրոմիութեան, Մինսքի խումբի համանախագահներուն, ՄԱԿ-ի Անվտանգութեան խորհուրդին ու միջազգային բոլոր կազմակերպություններուն, որպէսզի ստեղծուի միջազգային ատեան, որ դատական կարգով քննէ ու համապատասխան վճիռ կայացնէ բոլոր պատասխանատուներու նկատմամբ:

5.- Ինչպէս ամէն տարի ապրիլի 24-ը մեր ժողովուրդի համար Մեծ եղեռնի զոհերու ոգեկոչման, պահանջատիրութեան եւ ուխտի օր է, 28 փետրուարը նոյնպէս մեզի համար նոյնքան նշանակութիւն պէտք է ունենայ:

6.- Մեծ եղեռնի զոհերուն նուիրուած յուշակոթողներուն կողքին հարկ է կանգնեցնել նաեւ Սումկայիթի ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած յուշակոթողներ եւս, կազմակերպելով այդ ոգեկոչման օրերուն սգերթներ:

7.- Մեր օրացոյցներու վրայ «28 փետրուար, Սումկայիթի հայոց ցեղասպանութեան օր» յիշատակումով իր արժանավայել տեղը պէտք է գրաւէ:

Միջազգային հանրութիւնը պէտք է ընդունի, որ Սումկայիթի, Պաքուի, Գանձակի մէջ իրագործուած ջարդերը, մօտ կէս միլիոն հայութեան բռնի տեղահանումը, Թուրքիայի կողմէ Արեւմտեան Հայաստանի մէջ իրականացուած ցեղասպանութեան շարունակութիւնն են:

Անհրաժեշտ է յստակ ձեւակերպել, թէ ո՛ր մէկն է մեր պահանջատիրութիւնը: Այս խնդիրի վերաբերեալ բոլոր կուսակցութիւնները՝ Հայաստանի եւ Սփիւռքի մէջ, պէտք է ունենան միասնական, յստակ մօտեցում:

Մենք պէտք է գիտակցինք, որ կ՚ապրինք տեղեկատուական պատերազմի դարու մէջ, որտեղ կը յաղթէ ժամանակակից մեթոտներով աշխատողը: Հետեւաբար, պէտք է տիրապետենք նիւթին՝ հիմնախնդիրին, զինուինք բոլոր տեսակի հնարաւորութիւններով, որպէսզի պայքարինք եւ՛ քարոզչական ճակատով, եւ՛ քաղաքական ճակատով, եւ՛ դիւանագիտական ճակատով, արդար լուծումին հասցնելու մեր դատը:

Մենք պարտաւոր ենք մշտապէս յիշել եւ գնահատական տալ սումկայիթեան ողբերգութեան եւ յիշեցնել համաշխարհային հանրութեան, այնպէս ալ մեր ապագայ սերունդներուն, որ այդ ոճրագործութիւնը Պաքուի պատասխանն էր Լեռնային Ղարաբաղի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքի օրինական պահանջի արտայայտման:

Խուսափում չկայ, հայութիւնը մեր ճակատագիրն է իբրեւ քաղաքական, ազգային նկարագրի

տէր հաւաքականութիւն: Եւ հայ ժողովուրդի քաղաքական, ազգային, մարդկային ամէնէն վսեմ իտէալներուն բոլորանուէր սպասարկութիւնը մեր բոլորին սրբազան պարտականութիւնն է, ինքնահիրագործման ու ինքնաարժեւորման ամէնէն մարդավայել ու բեղուն ճանապարհը, անհատական թէ հաւաքական մակարդակի վրայ հաւասարապէս:

Սումկայիթի ցեղասպանութեան տարելիցի առիթով մեր գլուխները կը խոնարհենք բոլոր նահատակներու առջեւ եւ մեր հայրենակիցներու կորուստը այսօր աւելի շատ մեր մէջ թող արթնցնէ ոգիի պոռթկում, տայ մեզի աւելի շատ ուժ, որ կարողանանք մեր նպատակներու ճանապարհին ըլլալ ուժեղ, գործունեայ ու մանաւանդ միասնական, որպէսզի միայն աղէտները մեզ չհամախմբեն, այլ՝ ուրախութիւնները եւս:

ԴՐՕՇԱԿ
100 տարի առաջ

№ 1 (214) XXI ՏԱՐԻ ՅՈՒՆՈՒԱՐ 1911

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ" ՕՐԳԸՆ

Դարկասան

1909-ի փետրուարի սկզբից Ասրդասականի յեսադիմական ուժերը սսարացած՝ մի կողմից ուժեղ օղակով դաբարեցին Թաւրիզը, միւս կողմից արբաւանքներ տեղացին Սալմաս, Խոյ, Գիւնեյ, Մարանդ գաւառների գլխին: Չէին վհասւում թով ֆիչ կռող սահմանադրական յեղափոխականները:

Ցայսուն կերդով աչֆի էին զարնում յեղափոխականների, մուջահիդների անսակ բարժումները, որոնք այնֆան սուղ նստեցին Ասրդասականի ժողովրդին: Գաւառները գործում էին անջաս, առանց որևէ ընդհանուր ծրագրի. այսդես, Մարանդ գիւղաֆաղաֆը, որ ռազմական տեսակետից կարևոր կենսրոնակէտ է ամբողջ Ասրդասականի յեղափոխութեան համար, ամենայն յաջողութեամբ ձեռֆ էր բերուած երեֆ ամիս առաջ միաղեսականներից. այդդիսի կարևոր մի կէտ մուջահիդները թողնում անցնում են առաջ, դեդի Սօֆիան, որտեղից երկու կողմից բրջաղատելու էին Ալվար գիւղի մոտ բանակած Ռահիմ խանի հեծելագունդին:

Ջուլֆա-Սօֆիան գիծը սահմանադրականների ձեռումն էր: Սօֆիանում բանակած 500-600 մուջահիդները անցնում են առաջ Ամմադ գիւղը: Միացեալ ուժերը որֆան էլ աբխատում են դաբարել Ալվարը, չէ յաջողում: Սիդուած նահանջում են դէդի Սօֆիան՝ նորից կազմակերդուելու: Ահա այդ ժամանակ, փետրուարի 8-ին Ջուլֆան դաբտդանող դաբնակցական մարտիկներից 13 հոգի իր հետ առնելով հասնում է խմբադետ Տիգրան Ստեփանեանը. եկած են լինում նաև անգէն վրացիներ, 9 հոգի:

Եւ ի՞նչ... Շնորհիւ մուջահիդների անդիսցիդլին բարածֆի, տեղի ունեցաւ Սօֆիանի մէջ մի անարգ դարտութիւն, որ զգալի կերդով նստեմացրեց Ասրդասականի յեղափոխութեան հմայքը:

Սուջայի Լաբկեարը փետր.10-ին յանկարծակիի բերելով յեղափոխականներին գրում է նրանց և գրաւում Սօֆիանը և Մարանդը: Բոլոր մոջահիդները, Տ. Ստեփանեանի խումբը և վրացիները զոհւում են: Դաբնակցական մարտիկներից զոհւում են 10հոգի, որոնց անուն-ազգանուններն են.

1. Տիգրան Ստեփանեան, խմբադետ, ալէքսանդրոդոլցի
2. Յարութիւն Քիչուկեանց (Խենթ), կարնեցի, վերաբնակուած Ալէքսանդրոդոլ
3. Դաւիթ (ազգանունը անյայտ), զօրիսեցի
4. Աւագ Պետրոսեանց, մշեցի, Գ. Ջաւուշի զինուորներից
5. Նուրօ, վանեցի
6. Յովհաննէս Յարութիւնեան, տաճկասանցի
7. Գէորգ Օրսուեան (Սև Գէորգ), Սալմասի Հաւքվան գիւղացի
8. Յովսէփ Օհաննիսեան, Խոյի Սէյվասար գիւղից
9. Բաղշի Գաբրիէլեան, դարաբաղցի
10. Ստեփան Ազնաւուրեան (Արծիկ), ուսանող Ժընեւի համալսարանի, արտինցի:

Դժբախտաբար, զոհուածների մասին կենսագրական տեղեկութիւններ չունենք: Դարաբաղցի Բաղշու մասին ականատես դարտիկները դատմում էին հետեւեալը. «Նահանջի ժամանակ Սեյվան գիւղում, Բաղշին մի փոս տեղում դիրֆ է բռնում և այդտեղից աջողում է իր դէմ արբաւող թշնամիներից սդանել մոտ 25 հոգի.վերջը, մի ցածհոգի հայ մարդու դաւաճանութեամբ սդանւում է»:

Ուսանող Ստեփան Ազնաւուրեանի մասին՝ Սօֆիանի դէդֆում գերուած և աղա Դարադաղում մահմեդականացրած բուրսացի կօշկակար Կարադետ Գիլմազեանը դատմում է հետեւյալը. «Ուսանող Ստեփանին առաջին անգամ դատահեցի 1908թ. Բաթումի շրջանում, դրոմդագանդիսի դերի մէջ: Յաջորդ տարին տեսնելով նրան Ջուլֆայում, Բաթումիից եկած մարտիկների հետ, շատ խնդրեցի, որ կռիւներին չը մասնակցէ, որովհետև ինֆը իբրև մտաւոր ուժ, անհրաժեշտ է կազմակերդական գործերի համար: Վրդովուած դատասխանեց. «Թաւրիզից ընկերները օգնութիւն են կոչում, խիղճս չի կարող հանգստանալ, եթէ այլ գործով զբաղւեմ»»:

ԴՐՕՇԱԿ

Նոր գրքեր

2010 թվականի ընթացքում «Դրօշակի» խմբագրությունը հեղինակներից, հրատարակչություններից ստացել է հետեւյալ գրքերը (ցուցակում տեղ չեն գտել տարվա ընթացքում առանձնաբար ներկայացված գրքերը): Խմբագրությունը շնորհակալություն է հայտնում բոլոր նվիրատուներին:

1. Սեդրակ Զալալյան (Սեթո). Գործը եւ հուշերը

Հեղ.՝ Համլետ Գեւորգյան

Երեւան, 2011 թ., 242 էջ

Հեղինակային հրատարակություն

Գրքում ներկայացված են հայ ազգային-ազատագրական պայքարի անվանի գործիչ Սեդրակ Զալալյանի (Սեթոյի) գործունեությունը եւ հուշերը:

2. Ասուղ Զիվանի- Անհայտ երգեր

Աշխատասիրությամբ՝ Թովմաս Պողոսյանի

Խմբագիր՝ բանասիրական գիտ. թեկ. Ալվարդ Ղազիյան

Երեւան, 2009 թ., 672 էջ

«Լուսակն» հրատարակչություն

Ժողովածուն ընդգրկում է մեծ ասուղի անտիպ ստեղծագործությունների առավելապես ամբողջական ժառանգությունը, մոտ 420 երգ ու բանաստեղծություն:

3. Արտերկրում գտնվող հայկական պատմամշակութային ժառանգության իրավական կարգավիճակը

Հեղինակներ՝ Արման Սարգսյան (իրավաբան փորձագետ), Լիլիթ Միրզոյան (միջազգայնագետ փորձագետ)

Գիտական խմբագիր՝ Ա. Գ. Ղազինյան (իրավաբան. գիտ. թեկնածու, դոցենտ)

Խմբագիր՝ Ա. Օ. Մկրտչյան

Երեւան, 2010 թ., 168 էջ

Հրատ.՝ ՀՀ Սփյուռքի նախարարություն



4. Արցախի հայ ճարտարապետության մահմեդական հուշարձանները

Նախագծի հեղինակ՝ Սամվել Կարապետյան

Երեւան, 2010 թ., 36 էջ

Հրատ.՝ Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ

5. Նախիջեւան. Պատմական եւ արդի շրջանի որոշ հիմնահարցեր

Երեւան, 2010 թ., 186 էջ

Հրատ.՝ Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ

Ժողովածուի նյութերը նախատեսված են պատմության, ճարտարապետության, տնտեսության, քաղաքագիտության ու սոցիոլոգիայի ոլորտների մասնագետների, ինչպես նաեւ Նախիջեւանի խնդրի շուրջ վերլուծաբանների ու փորձագետների համար: Նյութերը մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաեւ ամենալայն ընթերցողի համար, ով հետաքրքրված է պատմական Հայաստանի այդ հիասքանչ հատվածի պատմությամբ ու արդի վիճակով:







6. Военно-политические аспекты сотрудничества Турции со странамы Южного Кавказа (Азербайджан, Грузия) и Центральной Азии. Динамика и основные тенденции развития

Левон Овсепян, Владимир Иванов

Ереван, 2010 г.,167 стр.

Изд. Институт политических исследований

В настоящей работе на основе открытых источников осуществлена попытка системного представления процесса развития военно-политических отношений Турции со странами Южного Кавказа (Азербайджана, Грузии) и тюркоязычными государствами Центральной Азии.

7. Օդային գերակայություն. Օդային հարձակման միջոցների եւ հակաօդային պաշտպանության հակամարտությունը ռեակտիվ դարաշրջանում

Հեղ.՝ Արծրուն Հովհաննիսյան

Երեւան, 2010 թ., 372 էջ

Հրատ.՝ Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ

Աշխատության մեջ առաջին անգամ հայերեն փորձ է արվել վերլուծել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծված բոլոր թռչող սարքերի կիրառության պատմությունը եւ դրանց դասերը:

Նախատեսված է զինվորականների, պատմաբանների, ինչպես նաեւ ռազմական գործով հետաքրքրվող լայն շրջանակների համար:

8. Հետխորհրդային երկրների հայկական համայնքների ինքնության խնդիրները եւ տեղեկատվական ռեսուրսները

Հրատ.՝ ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի փորձագիտական խորհրդի որոշման հիման վրա

Երեւան, 2010 թ., 252 էջ

Գրքում ներկայացվել եւ վերլուծվել են հետխորհրդային երկրների հայերի համայնքային ինքնության եւ ինքնակազմակերպման խնդիրները? հիմնականում ՌԴ-ում բնակվող հայ երիտասարդների հետ հեռակա հարցման արդյունքների հիման վրա:

9. Հայկական համայնքների ինքնակազմակերպման խնդիրները Հարավային Ռուսաստանում

Հրատ.՝ ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի փորձագիտական խորհրդի որոշման հիման վրա

Երեւան, 2010 թ., 220 էջ

Գրքում ուսումնասիրվել են Հարավային Ռուսաստանի (ՀՌ) հայության բազմաշերտ խմբերը եւ նրանց ինքնակազմակերպման հարցերը: Հետազոտությունն ամփոփում է տեղեկատվություն ՀՌ հայության ինքնակազմակերպման պատմական, ներկա խնդիրների, ընդհանուր տեղեկատվական դաշտի, ինչպես նաեւ վիրտուալ ցանցերում, պետական կառավարման, ֆինանսական, մտավոր եւ կրթական ոլորտներում հայերի մասնակցության մասին:

10. Հայ համայնքն ԱՄՆ-ում

Հրատ.՝ ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով, «Նորավանք» ԳԿՀ փորձագիտական խորհրդի որոշման հիման վրա

Երեւան, 2010 թ., 220 էջ

Աշխատությունում լուսաբանվում են ԱՄՆ հայության ներկայիս գիտական ներուժին, գիտակրթական ոլորտի զարգացման գործում հայ գիտնականների ու հայագիտական կենտրոնների ունեցած ներդրումներին առնչվող հարցեր:

Գիրքը նախատեսված է վերլուծական հանրության եւ ընթերցողների լայն շրջանակների համար:

11. Աղբարի՞կ, ափիկ մը ջու՞ր...

Հեղ.՝ Գէորգ Ճ. Աբէլեան

Հրատարակութիւն՝ Sava

Տպագրութիւն՝ Համազգայինի Վ. Սէքեան տպարանի

Պէյրութ – Լիբանան, 2010 թ., 459 էջ

Ներկայ հատորը ունի երկու բաժիններ.

Ա. բաժինը կը վերաբերի անոնց, որոնք վերամիացած են հայ հաւաքականութեան, ազգին: Այս բաժնին խորագիրն է՝ «Աղբարի՞կ, ափիկ մը ջու՞ր»

Բ. Այս բաժինը կը վերաբերի հրացած հայերու, որոնց մինչեւ չորրորդ սերունդին հանդիպեցայ: Այս հաւաքականութեան անդամները որոշ չափով կը պահեն ոչ միայն յիշողութիւն, այլ նաեւ իրենք զիրենք կը համարեն հայ...

12. Հայ մամուլը Յունաստանի մէջ

Գրութիւններ՝ Յովհաննէս – Սարգիս Աղաղաեան

Հրատ.՝ «Արմենիա» պարբերաթերթ

Սալոնիկ, Յունաստան, 2009 թ., 65 էջ

13. Ծաղկաքաղ պարսկական ժամանակակից պոէզիայից (1900 - 1980)

Կազմեց եւ թարգմանեց Աշոտ Գասպարի Մինասեանը

Գիրքը լոյս է տեսել մեկենասութեամբ հեղինակի զաւակների՝ Վիկտոր եւ Մաղէն, Արմէն եւ Ռիմա Մինասեանների

Թեհրան, 2010 թ., 723 էջ



Յարգելի ընթերցող,

Շարունակում է ՀՅԴ պաշտօնաթերթ «Դրօշակ»-ի 2011-ի բաժանորդագրութիւնը: Բաժանորդագրուել ցանկացողները մանրամասնութիւններին տեղեկանալու համար կարող են դիմել «Դրօշակ»-ի խմբագրութիւն, Էդիկ Անդրէասեանին:

Հասցէ՝ Երեւան, Մեր Մկրտչեան փողոց, 12/1
Հեռախօս՝ 0037410-521876
Էլ. փոստ՝ edik_andreas@yahoo.com

Ամալյա Էդիկի Վարդանյան

Ավարտել է Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիան, Կերպարվեստի ֆակուլտետի Գծանկարի բաժինը:

2006-ից՝ ՀՀ Նկարիչների միության անդամ:
2005-ից ԵրՃՇՊՀ-ի Գծանկարի, գունանկարի և քանդակի ամբիոնի դասախոս է:

Մասնակցել է մի շարք հանրապետական և միջազգային ցուցահանդեսների: Բազմաթիվ գրքերի ձևավորումների հեղինակ է:

ԴՐՈՇԱԿ

Պատկերասրահ





Դրոշակ

ВЛАСТЬ СОВЕТАМ
ЗЕМЛЯ КРЕСТЬЯНАМ
ФАБРИКИ РАБОЧИМ
ПЕРЕСТРОЙКА-
ПРОДОЛЖЕНИЕ
ДЕЛА
ОКТЯБРЯ!
ПЕРЕСТРОЙКА